2022-2024 թթ. ընտանեկան բռնության գործերով դատական նիստերի մշտադիտարկման արդյունքները

ԶԵԿՈՒՅՑ

«2022-2024 թթ. ընտանեկան բռնության գործերով դատական նիստերի մշտադիտարկման արդյունքները» զեկույցն իրականացվել է «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպության և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության համագործակցությամբ:

Զեկույցն իրականացվել է հետևյալ փորձագետների ներգրավմամբ՝

Վաղինակ Տեր-Հովհաննիսյան, հետազոտող, իրավաբան

Անահիտ Միքայելյան, իրավաբան

Լեզվական խմբագիր՝ Ազնիվ Նասլյան

Ձևավորում՝ «Զարտպրինտի»-ի

Այս հրապարակումը պատրաստվել է «Կանանց դեմ բռնության վերացման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի» ֆինանսավորմամբ, սակայն արտահայտված տեսակետները և ներառված բովանդակությունը չեն ենթադրում ՄԱԿ-ի կողմից պաշտոնական հաստատում կամ ընդունում:

ՀԴՏ 343.1:343.54(042.3)

ԳՄԴ 67.410+67.408.11

Ե 899

Հեղինակ՝

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա և

«Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպություն

Ե 899 2022-2024 թթ. ընտանեկան բռնության գործերով դատական նիստերի մշտադիտարկման արդյունքները / Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպություն.- Եր.: Զարտպրինտ, 2025.- 70 էջ:

ՀԴՏ 343.1:343.54(042.3)

ԳՄԴ 67.410+67.408.11

ISBN 978-9939-9361-4-7

© «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպություն, 2025

© «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպություն, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ **4**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **5**

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ **6**

ՄԱՍ 1. ԿԱՆԱՆՑ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ **9**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ 10

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ 17

«ՓԱՓՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ» (SOFT LAW) ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ 19

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 24

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 29

ԱՄՓՈՓՈՒՄ 31

ՄԱՍ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ **32**

ՆԱԽՈՐԴԻՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ 33

2022-2024 ԹԹ. ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 36

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԿԱՅԱՆԱԼԸ 39

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ԿԱՅԱՆԱԼԸ 42

ՏՈՒԺՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ 46

ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԸՆԹԱՑՔԸ 47

ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻՆ 50

ՏՈՒԺՈՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 54

ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՏՈՒԺՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ 59

ԿԱՅԱՑԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ 64

ԱՄՓՈՓՈՒՄ **67**

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ **69**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԳԲ - Գենդերային բռնություն

ԵԽ - Եվրոպայի խորհուրդ

ՀԿ - Հասարակական կազմակերպություն

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ԸԲ - Ընտանեկան բռնություն

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԻԱՎ - Մարդու իմունային անբավարարության վիրուս

ՄԻԵԴ - Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՄԻԵԿ - Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

ՔՔԻՄԴ – Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» և «Իրավունքի ուժ» ՀԿ-ները համատեղ պատրաստել են ընտանեկան բռնության գործերով դատական լսումների մշտադիտարկման սույն զեկույցը՝ նպատակ ունենալով հավաքելու և վերլուծելու տվյալներ, որոնք կօգնեն առավել ամբողջական պատկերացում կազմելու ընտանեկան բռնության գործերի դատական գործընթացների վերաբերյալ: Բացի այդ՝ հավաքված տեղեկությունները կծառայեն ընտանեկան բռնության դեպքերի հետևողական դիտարկմանն ու արդյունավետ պաշտպանության ապահովմանը: Զեկույցը ներառել է գործերի նախնական ուսումնասիրություն, քարտեզագրում և դատական լսումների բաշխվածության վերլուծություն՝ համակարգի բարելավումներ առաջարկելու նպատակով: Միաժամանակ, ուսումնասիրությամբ անդրադարձ է կատարվում ընտանեկան բռնության (ԸԲ) և գենդերային հիմքով բռնության (ԳԲ) գործերով տեղական և միջազգային իրավական ու պրակտիկ համատեքստին:

Մշտադիտարկման հիմնական նպատակն է եղել գնահատել Հայաստանի դատական պրակտիկան ԸԲ գործերի ընթացքի արդյունավետության տեսանկյունից: Մշտադիտարկման ընթացքում ուշադրություն է դարձվել կանանց արդարադատության հասանելիության, դատաքննության ընթացքում անվտանգ և հարգալից միջավայրի ապահովման հարցերին: Իրականացվել են դատական գործերի առանձնացում, լսումների քանակի և տեղակայման բաշխվածության վերլուծություն: Ստեղծվել է մեթոդաբանական հիմք, որը հնարավորություն է տվել ապահովելու տվյալների հավաստի հավաքում և վերլուծություն:

Մշտադիտարկման արդյունքում հնարավոր է դարձել բացահայտել դատական համակարգի ուժեղ և թույլ կողմերը՝ նպաստելով ԸԲ գործերով դատական գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Մշտադիտարկման արդյունքում ձեռք են բերվել տվյալներ ԸԲ գործերով դատաքննության բնույթի, ընթացքի և լսումների վերաբերյալ, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու համակարգի բարելավման ուղղությամբ կատարվելիք քայլերը:

Սույն զեկույցը ուշադրության կենտրոնում է պահում ընտանեկան բռնությունից տուժած կանանց անվտանգությանն առնչվող հարցերը դատաքննության ամբողջ ընթացքում: Կազմակերպության դիտորդները հետևել են տուժող կնոջ նկատմամբ դատարանի և դատավարության մասնակիցների վերաբերմունքին՝ գենդերային հիմքով խտրականության և կարծրատիպերի վերարտադրման միջադեպերն արձանագրելու նպատակով:

«2022-2024 թթ. ընտանեկան բռնության գործերով դատական նիստերի մշտադիտարկման արդյունքները» զեկույցում ներկայացված է Հայաստանի Հանրապետության դատարաններում ԸԲ գործերի քննության վերաբերյալ մինչ օրս իրականացված ամենածավալուն և համապարփակ մշտադիտարկման վերլուծությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն մշտադիտարկման նպատակն է՝ գնահատել ԸԲ գործերով կանանց համար արդարադատության մատչելիության մակարդակի և դատական գործընթացների արդյունավետությունը: Ուսումնասիրության հետազոտական հարցերը ներառել են.

- Դատաքննության ընթացքը.
- Դատարանների ծանրաբեռնվածությունը.
- Դատավարության մասնակիցների ներկայությունը.
- Տուժողների անվտանգությունը դատարաններում.
- Դատարանի և դատավարության մասնակիցների վերաբերմունքը տուժողների նկատմամբ:

Ուսումնասիրությունն իրականացվել է տվյալների հավաքման և միջազգային իրավական կարգավորումների ու ստանդարտների, միջազգային պրակտիկայի ու տեղական համատեքստի վերլուծմամբ, ինչի հիման վրա ներկայացվել են առաջարկներ:

2022-2024 թվականներին ԸԲ գործերով կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ դատական մշտադիտարկման մեթոդաբանությունը մշակվել և կիրառվել է՝ նպատակ ունենալով բացահայտելու դատական պրակտիկայում առկա խոչընդոտները և բարելավելու արդարադատության հասանելիությունը:

Մշտադիտարկվել են Երևանի, Արմավիրի, Արարատի և Վայոց ձորի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում քննվող դատական նիստերը: Հաճախ դիտորդները դատարան են ժամանել, սակայն պարզվել է, որ նիստը որևէ պատճառով չի կայանալու: Այդ իսկ պատճառով մշտադիտարկման համար պլանավորված **120 դատական նիստերից 33-ի վերաբերյալ ընդհանրապես հնարավոր չի եղել տեղեկություններ հավաքել:** Մյուս դեպքերում ևս դատական նիստերի վերաբերյալ ամբողջական տվյալներ հավաքելու բարդություններ

են առաջ եկել: Դրա հետևանքով առաջացել են մշտադիտարկման տվյալների վերլուծության մի շարք դժվարություններ, քանի որ որոշակի տվյալներ բացակայել են կամ կիսատ են լրացվել: Այնուամենայնիվ, արդյունքների համաչափության և համեմատելիության նպատակով շարունակվել են դիտարկումները, և կատարվել է ուսումնասիրություն:

Այսպիսով՝ 2022 թ. օգոստոսի 1-ից մինչև 2024 թ. հուլիսի 31-ը դիտարկվել է 120 դատական նիստ, սակայն փաստացի արձանագրվել են 33 դատական գործով 87 նիստի տվյալներ:

Մշտադիտարկումն իրականացվել է նախապես մշակված սկզբունքներով և ժամանակացույցով: Ընտրվել են գործեր, որոնք հասանելի են եղել բաց աղբյուրներում, այդ թվում՝ www.datalex.am դատական ակտերի որոնման համակարգում, հաշվի առնելով մայրաքաղաքում և մարզերում նիստերի համամասնությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել նաև նախորդ տարում մշտադիտարկված գործերին՝ դատական ամբողջական գործընթացի վերլուծության նպատակով:

Դիտարկման մեթոդները ներառել են՝

- *Տվյալների նախնական մշակում, հիմնական օրինաչափությունների և ռիսկերի առանձնացում.*
- *Վերլուծություն սահմանված ցուցանիշերի շուրջ՝ ներառյալ հաճախականության հաշվարկ, վարքագծային դրսևորումների գնահատում, կողմնակալության բացահայտում:*

Մշտադիտարկումն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ և սկզբունքներով.

- *Դատական նիստի օրը դիտորդը նախապես կապ է հաստատել դատարանի աշխատակազմի հետ՝ ճշտելու նիստի կայացման փաստը: Չկայացած նիստերի պատճառներն արձանագրվել են:*
- *Դիտորդները դատարան են ժամանել նիստից 15 րոպե շուտ՝ տուժողի և մեղադրյալի, ինչպես նաև նրանց ուղեկցողների հնարավոր հանդիպումները դիտարկելու համար: Դահլիճը լքել են միայն տուժողի դուրս գալուց հետո, իսկ դատարանի շենքը՝ երբ տուժողը լիովին հեռացել է տարածքից:*
- *Դիտարկվել են նախորդ տարվանից ընթացող գործերը՝ ամբողջական պատկերը ստանալու համար:*
- *Դիտորդները կապ են պահպանել տուժողի փաստաբանի հետ՝ տեղեկատվությունը ժամանակին թարմացնելու նպատակով:*

- *Ամսական կտրվածքով կազմվել է դատական նիստերի օրացույց, որտեղ նիստերը բաշխվել են հավասարաչափ: Նախկինում սկսված գործերը շարունակվել են նշանակված օրերին:*
- *Դիտորդները գործել են անկողմնակալության սկզբունքով՝ փաստագրման ընթացքում խուսափելով կողմերի կամ դատարանի հետ կոնֆլիկտից:*
- *Օգտագործվել են գրառումներ անելու և ձայնագրելու միջոցներ: Տվյալները մուտքագրվել են էլեկտրոնային փաստաթղթերում՝ ապահովելով դիտորդների և վերահսկող անձի հասանելիությունը:*

Հավաքվել և վերլուծվել են հետևյալ տվյալները.

- *Դատական գործի համարը, հակիրճ նկարագրությունը.*
- *Կողմերի տվյալները, ներկայությունը նիստին.*
- *Դատական նիստի ամսաթիվը, դատարանի անվանումը, նստավայրը, նախագահող դատավորի անունը.*
- *Նիստի կայանալը, դրա սկսման և ավարտի ժամերը, ուշացման պատճառները, դատարանի անդրադարձը ուշացման վերաբերյալ.*
- *Կողմերի փոխհարաբերությունները նախքան նիստը և նիստի ընթացքում.*
- *Տուժողի ներկայացուցիչների առկայությունը և կարգավիճակը.*
- *Մեղադրյալի խափանման միջոցները.*
- *Նիստերի հետաձգման պատճառները և բերման ենթարկելու որոշումների առկայությունը.*
- *Խտրական կամ վիրավորական արտահայտությունների առկայությունը դատավարության ընթացքում.*
- *Նիստի արդյունավետության գնահատում.*
- *Տուժողի հայտարարությունների ամբողջական ներկայացման հնարավորություն.*
- *Գենդերային կողմնակալության արտահայտությունների առկայությունը.*
- *Տուժողի անվտանգության ապահովումը նիստի ընթացքում, մինչ և հետո.*
- *Վճռի մանրամասները:*

ՄԱՍ 1

ԿԱՆԱՆՑ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ

Արդարադատության մատչելիությունը կարևոր իրավունք է, որն ամրագրված է մարդու իրավունքների պաշտպանության համակարգի բազմաթիվ փաստաթղթերում: ԸԲ և ԳԲ գործերով պատշաճ դատական արձագանքը վերաբերում է տուժողների՝ արդարադատության հասանելիության, անվտանգության և արժանապատվության ապահովմանը: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել որոշակի խմբի կանանց առանձնահատուկ կարիքներին, օրինակ՝ պայմանավորված վերջիններիս առողջական վիճակով և/կամ սեռական կողմնորոշմամբ, քանի որ նրանք առավել խոցելի են: Միջազգային իրավական շրջանակները, տարածաշրջանային և «փափուկ իրավունքի» (soft law) գործիքները ապահովում են համապարփակ շրջանակ՝ այս հարցերը ընդգրկուն ձևով կարգավորելու համար: Ներքոգրյալում ներկայացված են այն միջազգային իրավակարգավորումները, հիմնական սկզբունքները, ստանդարտները և լավագույն պրակտիկաները, որոնք կարգավորում են ԸԲ և ԳԲ գործերով դատական գործընթացները՝ ընդգծելով կանանց նկատմամբ արդարացի, զոհակենտրոն, կարիքահեն և գենդերազգայուն մոտեցումները, գործերի արդյունավետ ու ժամանակին քննությունը, ինչպես նաև հանցագործներին համապատասխան պատասխանատվության ենթարկելը և այլն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW)

Կոնվենցիան ընդունվել է 1979 թվականին և կարևոր դեր է խաղում գենդերային բռնության դեմ պայքարում, և ՀՀ-ն վավերացրել է այն: Կոնվենցիայի 2-րդ հոդվածն ամրագրում է պետությունների պարտավորությունը՝ սահմանելու տղամարդկանց հետ հավասար պայմաններով կանանց իրավունքների իրավական պաշտպանությունը և ապահովելու իրավասու ներպետական ատյանների ու պետական այլ հաստատությունների օգնությամբ կանանց պաշտպանությունն ընդդեմ խտրականության ցանկացած գործողության: Մասնավորապես, Կոնվենցիան ամրագրում է.

«Մասնակից պետությունները դատապարտում են կանանց նկատմամբ խտրականությունն իր բոլոր ձևերով, համաձայնում են բոլոր համապատասխան միջոցներով և առանց հապաղելու վարել կանանց նկատմամբ խտրականության վերացման քաղաքականություն և այդ նպատակով պարտավորվում են.

(ա) տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքն ամրագրել իրենց ազգային սահմանադրություններում կամ համապատասխան օրենսդրության մեջ, եթե այն դեռևս ամրագրված չէ, և օրենսդրության ու այլ համապատասխան միջոցների օգնությամբ ապահովել այդ սկզբունքի գործնական իրականացումը,

(բ) ընդունել կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականությունն արգելող համապատասխան օրենսդրական և այլ միջոցներ՝ ներառյալ պատժամիջոցներ, որտեղ դրանք անհրաժեշտ են,

(գ) սահմանել տղամարդկանց հետ հավասար պայմաններով կանանց իրավունքների իրավական պաշտպանություն և իրավասու ներպետական ատյանների ու պետական այլ հաստատությունների օգնությամբ ապահովել կանանց պաշտպանությունն ընդդեմ խտրականության ցանկացած գործողության,

(դ) ձեռնպահ մնալ կանանց նկատմամբ խտրականության որևէ գործողության կամ պրակտիկայի մեջ ներգրավվելուց և երաշխավորել, որ պետական մարմիններն ու հաստատությունները կգործեն այդ պարտավորությանը համապատասխան,

(ե) ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու համար ցանկացած անձի, կազմակերպության կամ ձեռնարկության կողմից կանանց նկատմամբ դրսևորվող խտրականությունը,

(զ) ձեռնարկել բոլոր համապատասխան՝ ներառյալ օրենսդրական միջոցները՝ փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, սովորույթներն ու պրակտիկան, որոնք ներկայացնում են խտրականություն կանանց նկատմամբ,

(է) վերացնել ներպետական քրեական օրենսդրության բոլոր այն դրույթները, որոնք խտրականություն են ներկայացնում կանանց նկատմամբ»[1]*:*

Սա նշանակում է, որ պետությունները պետք է վերացնեն կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը՝ ներառյալ դատական համակարգում և գործընթացներում: Ավելին՝ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ ապահովելու, որ կանայք ունենան արդարադատության հասնելու հավասար հնարավորություններ և պաշտպանված լինեն գենդերային բռնությունից:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի **թիվ 35 Ընդհանուր հանձնարարականը** մանրամասնում է պետությունների պարտավորությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով

[1]https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505

գենդերային բռնությանը: Այն ընդգծում է այնպիսի դատական համակարգ ունենալու անհրաժեշտությունը, որը կապահովի բռնության ենթարկվածների արդարադատության հասանելիությունը՝ ներառյալ *արդար և ժամանակին լսումները:* Միաժամանակ, Հանձնարարականում հատուկ շեշտվում է այն հանգամանքը, որ կանանց նկատմամբ խտրականությունը անբակտելիորեն կապված է նրանց կյանքի վրա ազդող այլ գործոնների հետ: Կոմիտեն նշել է, որ նման գործոնները ներառում են *կանանց ազգային պատկանելությունը, ռասան, մաշկի գույնը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը և/կամ կաստան, լեզուն, կրոնը կամ համոզմունքը, քաղաքական համոզմունքները, ազգային ծագումը, ամուսնական կարգավիճակը, մայրությունը, ծնողական կարգավիճակը, տարիքը, առողջական վիճակը, հաշմանդամությունը, լեսբի, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս լինելու, փախստական, ներքին տեղահանված կամ քաղաքացիություն չունեցող լինելու, միգրացիոն կարգավիճակի, ՄԻԱՎ-ով ապրող լինելու, ազատությունից զրկված լինելու և այլ հանգամանքներ:* Ինչը նշանակում է, որ պետությունների կողմից անհրաժեշտ են համապատասխան իրավական և քաղաքական միջոցառումներ: Այսինքն՝ այս խմբի կանանց արդարադատության հասանելիության ապահովման հարցում պետությունները պետք է լրացուցիչ ջանքեր գործադրեն:

Կանայք պետք է հնարավորություն ունենան օգտվելու արդյունավետ իրավական միջոցներից և մասնագիտացված ծառայություններից՝ ներառյալ պաշտպանության միջոցներից, ապաստարաններից և իրավաբանական օգնությունից՝ ուղղված նրանց անվտանգության ու բարօրության ապահովմանը: Սա ընդգծում է դատական գործընթացներում *զոհակենտրոն մոտեցման* կարևորությունը, որտեղ բռնության ենթարկվածներին տրամադրվում է անհրաժեշտ աջակցություն:

Բացի այդ՝ Հանձնարարականը, կենտրոնանալով կանանց արդարադատության հասանելիության վրա, ընդգծում է *գենդերազգայուն* դատական գործընթացների անհրաժեշտության մասին: Այսպես՝ իշխանությունները պետք է համարժեք արձագանքեն կանանց նկատմամբ ԳԲ բոլոր դեպքերին, այդ թվում՝ կիրառելով քրեական օրենսդրություն և, անհրաժեշտության դեպքում, ex officio քրեական հետապնդում՝ ենթադրյալ հանցագործների նկատմամբ արդար, անաչառ, ժամանակին և արագ դատավարություն իրականացնելու և համապատասխան պատիժներ սահմանելու միջոցով[2]:

Կոմիտեի մեկ այլ՝ **թիվ 33 Ընդհանուր հանձնարարականում**

[2]https://docs.un.org/en/CEDAW/C/GC/35

ամրագրվել է, որ արդարադատության մատչելիությունն ընդգրկում է արդարադատությունից օգտվելու հնարավորությունը, հասանելիությունը, մատչելիությունը, լավ որակը, բռնության ենթարկվածների համար պաշտպանության միջոցների ապահովումը և արդարադատության համակարգի հաշվետվողականությունը:

Ինչ վերաբերում է կանանց արդարադատության մատչելիությանը, Կոմիտեի՝ պետություններին ուղղված բազմաթիվ առաջարկների հետ մեկտեղ Հանձնարարականում ամրագրվել է հետևյալ սկզբունքների ապահովումը.

- **Անկողմնակալ և պրոֆեսիոնալ արդարադատություն,** մասնավորապես՝ դատավորներն ու իրավապահները պետք է գործեն առանց խտրականության, զերծ մնան գենդերային կարծրատիպերից.
- **Հակախտրական համակարգ.**
- **Անհավասարության հաղթահարում՝** վերանայելով ապացույցների ներկայացման բեռը.
- **Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ՝** խրախուսելով ՀԿ-ների ներգրավումը դատավարություններում և աջակցելով կանանց իրավունքների իրացմանը.
- **Կանանց պաշտպանություն,** հատկապես մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կանանց պաշտպանություն սպառնալիքներից և ոտնձգություններից.
- **Տարածքային մատչելիություն՝** դատարանների հասանելիություն հեռավոր բնակավայրերում, մոբիլ դատարանների ստեղծում, թվային լուծումներ.
- **Աջակցության ծառայություններ՝** ֆինանսական օգնություն, ապաստարաններ, թեժ գծեր, իրավաբանական, հոգեբանական ու բժշկական ծառայություններ.
- **Տեղեկատվություն և թարգմանություն՝** տեղեկատվության տարածում բոլոր լեզուներով, թարգմանության և գրագիտության պակաս ունեցող կանանց անհատական օգնություն:
- **Թվային հասանելիություն՝** արդարադատության թվայնացում, տեսակոնֆերանսի կիրառություն, տվյալների հասանելիություն.
- **Ապահով միջավայր դատարաններում՝** ֆիզիկական մատչելիություն, գենդերային ստորաբաժանումների առկայություն, տեղափոխման ծախսերի հատուցում.
- **Աջակցության կենտրոնների ապահովում՝** մեկ վայրում իրավաբանական, սոցիալական ու առողջապահական

ծառայությունների տրամադրում:

- **Մասնավոր պաշտպանություն,** անհրաժեշտության դեպքում՝ նիստերի մասնավոր անցկացում, հեռավար վկայություն, բռնության ենթարկվածի գաղտնիության պահպանում.
- **Որակի ապահովում՝** արդարադատության միջազգային չափանիշերին համապատասխանություն, վերահսկողություն, խտրականության բացառում դատական գործընթացում և այլն[3]:

Այսպիսով՝ Հանձնարարականներն ընդգծում են համակարգային այնպիսի խոչընդոտների հաղթահարման կարևորությունը, որոնք խանգարում են կանանց, հատկապես՝ մարգինալացված խմբերի կանանց արդարադատության հասանելիությանը:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Ստամբուլյան կամ Ստամբուլի կոնվենցիա)

Կոնվենցիան ընդունվել է 2011 թվականին և հանդիսանում է ամենահամապարփակ տարածաշրջանային գործիքներից մեկը, որն ուղղված է կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին, այդ թվում՝ նրանց արդարադատության հասանելիության ապահովմանը: Կոնվենցիայի 49-րդ հոդվածն ամրագրում է.

«1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որ Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի դրսևորման դեպքերով նախաքննական ու դատական վարույթներն իրականացվեն առանց անհարկի ձգձգումների՝ միաժամանակ քրեական դատավարության բոլոր փուլերում հաշվի առնելով տուժողի իրավունքները:

2. Մասնակից պետությունները, մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին և բռնության գենդերային ընկալմանը համապատասխան, պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որ սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունն ու դրանցով քրեական հետապնդման իրականացումը կատարվեն արդյունավետ կերպով»[4]:

Ընդհանուր առմամբ, այս Կոնվենցիան ներառում է գենդերային հիմքով բռնության ենթարկվածների համար արդարադատության

[3]https://digitallibrary.un.org/record/807253?v=pdf
[4]https://rm.coe.int/168046246d

հասանելիությանը նպաստելուն ուղղված բազմաթիվ դրույթներ, մասնավորապես՝ կողմ պետություններից պահանջելով՝

- ապահովել բռնության ենթարկվածների իրավունքների պաշտպանության միջոցներ առանց խտրականության (4-րդ հոդված),
- ապահովել կողմ պետությունների՝ բռնության գործողությունները կանխարգելելու, քննելու, պատժելու և փոխհատուցելու պատշաճ ջանք (5-րդ հոդված),
- միջոցներ ձեռնարկել կանանց ու տղամարդկանց վարքի սոցիալական և մշակութային մոդելներում փոփոխությունները խթանելու համար՝ նպատակ ունենալով արմատախիլ անելու գենդերային կարծրատիպերը (12-րդ հոդված),
- ապահովել բռնության ենթարկվածների հետ աշխատող մասնագետների համապատասխան վերապատրաստում նրանց կարիքների, իրավունքների և հավասարության վերաբերյալ (15-րդ հոդված),
- տրամադրել համապատասխան իրավական տեղեկատվություն (19-րդ հոդված),
- խրախուսել հանցանքի մասին տեղեկացնելը (27-րդ հոդված),
- տրամադրել բռնության ենթարկվածների իրավական պաշտպանության համապատասխան քաղաքացիաիրավական միջոցներ (29-րդ հոդված) և փոխհատուցում (30-րդ հոդված),
- քրեականացնել կամ այլ կերպ պատժելի դարձնել կանանց նկատմամբ բռնության բազմաթիվ ձևերը (33-40-րդ հոդվածներ),
- ապահովել, որ քննությունը և դատական վարույթն իրականացվեն առանց անհարկի ուշացումների (49-րդ հոդված), և որ դատախազները կարողանան հարուցել և շարունակել վարույթը, նույնիսկ եթե բռնության ենթարկվածը հետ է վերցնում բողոքը (55-րդ հոդված),
- ապահովել, որ բռնության ենթարկվածի սեռական կյանքի պատմության և սեռական վարքագծի վերաբերյալ ապացույցները թույլատրվեն միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերելի են և անհրաժեշտ (54-րդ հոդված),
- ապահովել, որ վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային գործընթացները կամ պատժի սահմանումը՝ ներառյալ մեդիացիան և հաշտարարությունը, արգելված լինեն (48-րդ հոդված),
- ապահովել բռնության ենթարկվածների պաշտպանությունը քննության և դատական վարույթի բոլոր փուլերում (56-րդ հոդված),

- ապահովել, որ բռնության ենթարկվածներին տրամադրվի իրավական աջակցությունից և անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորություն (57-րդ հոդված):

Այսինքն՝ ընտանեկան բռնության գործերում դատական գործընթացները պետք է լինեն արդար և արդյունավետ՝ բռնության ենթարկվածներին հետագա վնասից պաշտպանելու միջոցներով: Պետությունները պետք է ապահովեն, որ հետաքննությունն ու դատական գործընթացներն իրականացվեն առանց անհարկի ուշացման՝ ընդգծելով ժամանակին արդարադատության կարևորությունը բռնության ենթարկվածների համար: Սա շատ կարևոր է ԸԲ դեպքերում, քանի որ ուշացումները կարող են խորացնել բռնության ենթարկվածների հոգեբանական տրավման: Բացի այդ՝ պետությունները պետք է ձեռնարկեն անհապաղ պաշտպանության միջոցներ՝ կանխելու բռնության հետագա գործողությունները: Դա ներառում է պաշտպանության միջոցների տրամադրում և այլ իրավական միջոցներ՝ բռնության ենթարկվածների անվտանգությունն ապահովելու համար: Կոնվենցիան ընդգծում է բռնության ենթարկվածների պաշտպանության այնպիսի միջոցների կարևորությունը, ինչպիսիք են արգելքի միջոցները և անվտանգ դատական միջավայրը՝ կանխելու կրկնազոհացումը դատական գործընթացների ժամանակ:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (ՔՔԻՄԴ)

Դաշնագիրն ընդունվել է 1966 թվականին և երաշխավորում է *արդար դատաքննության իրավունքը* 14-րդ հոդվածի համաձայն: Այս դրույթը հռչակում է, որ բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Մասնավորապես, Դաշնագիրն ամրագրում է. *«Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք քննելու կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք»*[5]: Արդար դատավարության իրավունքը հատկապես կարևոր է ընտանեկան բռնության և գենդերային բռնության դեպքերում, որտեղ բռնության ենթարկվածները հաճախ բախվում են համակարգային խոչընդոտների՝ արդարադատության հասնելու համար:

[5]https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500

Իսկ Դաշնագրի 26-րդ հոդվածով երաշխավորվում է յուրաքանչյուրի՝ *խտրականությունից զերծ լինելու իրավունքը*, մասնավորապես՝ ամրագրելով, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք: Այդ առնչությամբ ցանկացած կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով, և այն բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից՝ անկախ որևէ հատկանիշից, այդ թվում՝ ըստ սեռի կամ այլ հանգամանքի:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ)

Կոնվենցիան ընդունվել է 1950 թվականին, հռչակում է յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը՝ 6-րդ հոդվածի համաձայն[6]: Այս դրույթն ամրագրում է, որ անհատներն ունեն ողջամիտ ժամկետում անկախ և անաչառ դատարանի կողմից արդար դատաքննության իրավունք: ՄԻԵԿ-ը կարևոր դեր է խաղացել Եվրոպայում ԸԲ գործերով դատական արձագանքների ձևավորման գործում, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միջոցով, որն ընդգծել է բռնության ենթարկվածներին հետագա վնասից պաշտպանելու կարևորությունը դատական գործընթացներում: Ավելին՝ Կոնվենցիան հռչակում է խտրականության արգելքը (14-րդ հոդված)՝ անկախ որևէ հատկանիշից, մասնավորապես՝ ամրագրելով, որ դրանում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, սոցիալական դրությունից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)

ՄԻԵԴ-ի վճիռներում արտացոլվում են այն խոչընդոտները, որոնց առնչվում են կանայք արդարադատության համար դիմելիս: Արդյունքում, Դատարանի նախադեպային իրավունքով ձևակերպվում են չափանիշեր, մասնավորապես՝ կանանց նկատմամբ բռնության դեպքերի առնչությամբ: ՀՀ-ն ԵԽ անդամ է, և ՄԻԵԴ-ի վճիռներով սահմանված չափանիշերը ևս ուղենիշային են ՀՀ դատաիրավական համակարգի համար:

[6] https://www.echr.coe.int/documents/d/echr/Convention_Instrument_HYE

Ըստ էության՝ դատական պաշտպանության միջոցները պետք է լինեն մատչելի և արդյունավետ: Ընդհանուր առմամբ, պետք է ապահովվեն հետևյալ սկզբունքները.

- **Արդար դատաքննություն.**
- **Հանգամանալի և արդյունավետ քննություն.**
- **Հարգանք դիմումատուի անձնական անձեռնմխելիության նկատմամբ.**
- **Խտրականության բացառում** և այլն[7]:

Կանանց իրավունքների վերաբերյալ Աֆրիկյան խարտիայի արձանագրություն (Մապուտոյի արձանագրություն)

Մապուտոյի արձանագրությունն ընդունվել է 2003 թվականին և Աֆրիկայում կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի հիմնական տարածաշրջանային գործիքն է: Արձանագրության 4-րդ հոդվածը պահանջում է, որ պետություններն ընդունեն օրենսդրական և դատական միջոցներ՝ կանխելու և հաղթահարելու կանանց նկատմամբ բռնությունը: Այն պահանջում է, որ պետություններն ապահովեն կանանց համար հնարավորություն՝ օգտվելու արդարադատությունից և աջակցության ծառայություններից՝ ներառյալ իրավաբանական օգնությունից և պաշտպանության այլ միջոցներից[8]:

Մապուտոյի արձանագրությունը նաև ընդգծում է մշակութային այնպիսի պրակտիկաների հաղթահարման կարևորությունը, որոնք պահպանում են կանանց նկատմամբ բռնությունը, ինչպիսիք են կանանց սեռական օրգանների խեղումը և վաղ ամուսնությունները: Գենդերային բռնության դեմ պայքարի այս ամբողջական մոտեցումը կարևոր է՝ ապահովելու, որ դատական համակարգերը զգայուն լինեն բռնության ենթարկվածների կարիքների նկատմամբ:

[7] https://rm.coe.int/methodology-womens-access-to-justice-arm-pgg/16809c8282%D6%89
[8] https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Women/WG/ProtocolontheRightsofWomen.pdf

«ՓԱՓՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ» (SOFT LAW)[9]

ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

ՄԱԿ-ի հիմնական սկզբունքները հանցագործության և իշխանության չարաշահման ենթարկվածների արդարադատության վերաբերյալ

Հանցագործության և իշխանության չարաշահման ենթարկվածների արդարադատության վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնական սկզբունքներն ընդունվել են 1985 թվականին: Այն նախատեսում է ընդգրկուն շրջանակ՝ հանցագործությունից տուժած անձանց՝ ներառյալ ԸԲ և ԳԲ ենթարկվածներին, կարեկցանքով և հարգանքով վերաբերվելու ապահովման նպատակով: *Հիմնական սկզբունք 4-ը* նշում է. *«Տուժողներին պետք է վերաբերվել կարեկցանքով և նրանց արժանապատվության նկատմամբ հարգանքով: Նրանք իրավունք ունեն օգտվելու արդարադատության մեխանիզմներից և ստանալու արագ փոխհատուցում իրենց կրած վնասի համար, ինչպես նախատեսված է ազգային օրենսդրությամբ»:*

Հիմնական սկզբունք 6-ը հետագայում ընդգծում է տուժողների կարիքների հիման վրա դատական գործընթացների ապահովման կարևորությունը՝ նշելով, որ տուժողների կարիքներին համապատասխան դատական և վարչական գործընթացների արձագանքումը պետք է նպաստի հետևյալ միջոցներով.

«ա) տուժողներին տեղեկացնել իրենց դերի և գործերի վարույթի շրջանակի, ժամկետի ու ընթացքի, ինչպես նաև գործերի քննման կարգի մասին,

(բ) թույլ տալ, որ տուժողների տեսակետներն ու մտահոգությունները ներկայացվեն և դիտարկվեն դատավարության համապատասխան փուլերում, որտեղ շոշափվում են նրանց անձնական շահերը՝ առանց մեղադրյալին վնաս պատճառելու և ազգային քրեական արդարադատության համակարգին համապատասխան.

(գ) Տուժողներին պատշաճ օգնություն ցուցաբերել իրավական գործընթացի ամբողջ ընթացքում.

դ) միջոցներ ձեռնարկել բռնության ենթարկվածների համար անհարմարությունները նվազագույնի հասցնելու, անհրաժեշտության դեպքում նրանց գաղտնիությունը պաշտպանելու և նրանց, ինչպես նաև նրանց ընտանիքների և վկաների անվտանգությունն ապահովելու

[9]Ծանոթագրություն. «Փափուկ իրավունք» (Soft law) տերմինն օգտագործվում է մատնանշելու այն համաձայնագրերը, սկզբունքները, հռչակագրերը և այլ տեսակի փաստաթղթերը, որոնք իրավաբանորեն պարտադիր բնույթ չունեն: Մանրամասն տե՛ս՝ https://www.ecchr.eu/en/glossary/hard-law-soft-law/

ահաբեկումից և հաշվեհարդարից.

ե) Խուսափել գործերի լսումների և տուժողներին փոխհատուցում տրամադրող հրամանների կամ որոշումների կատարման անհարկի ձգձգումներից»[10]:

Այսպիսով՝ այս սկզբունքն ընդգծում է դատական գործընթացում տուժողների ձայնի ապահովման և նրանց տեսակետները հաշվի առնելու կարևորությունը:

ՄԱԿ-ի ուղեցույցները տուժող երեխաների և վկաների վերաբերյալ դատական գործերում

ՄԱԿ-ի ուղեցույցները, որոնք ընդունվել են 2005 թվականին, սահմանում են ուղեցույցներ՝ ապահովելու տուժող երեխաների և վկաների իրավունքների պաշտպանությունը դատական գործընթացներում: Մասնավորապես, այն ընդգծում է տուժող երեխաների և վկաների *գաղտնիության պաշտպանության* կարևորությունը՝ նշելով, որ տուժող երեխաների և վկաների գաղտնիությունը պետք է պաշտպանվի դատական գործընթացի բոլոր փուլերում, այդ թվում՝ տեղեկատվության բացահայտման սահմանափակումը, որը կարող է հանգեցնել նրանց նույնականացմանը[11]:

Այս ուղեցույցները հատկապես կարևոր են ԸԲ և ԳԲ դեպքերում, որտեղ երեխաները կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն տուժել բռնությունից: Դատական գործընթացների ընթացքում տուժող երեխաների և վկաների պաշտպանությունը կարևոր է՝ կանխելու վերատրավմատիզացիան և ապահովելու արդարադատությունից օգտվելու նրանց հնարավորությունը:

ՄԱԿ-ի ձեռնարկը կանանց նկատմամբ բռնության դեմ օրենսդրության վերաբերյալ

Կանանց նկատմամբ բռնության դեմ օրենսդրության վերաբերյալ ՄԱԿ-ի ձեռնարկը հրատարակվել է 2010 թվականին: Ուղեցույցի նպատակն է՝ ապահովել, որ դատական համակարգերը բռնության ենթարկվածների կարիքների նկատմամբ զգայուն լինեն: Մասնավորապես, ձեռնարկում նշվում է, որ դատական գործընթացները պետք է իրականացվեն այնպես, որ *հարգվեն տուժողի արժանապատվությունն ու գաղտնիությունը, ապահովվի նրա անվտանգությունը՝ խուսափելով վախեցնելուց,*

[10]https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-basic-principles-justice-victims-crime-and-abuse
[11]https://www.unodc.org/pdf/criminal_justice/Guidelines_E.pdf

վրեժխնդրությունից կամ կրկնազոհացումից[12]*:*

Ձեռնարկը նաև ընդգծում է դատական գործընթացներում զոհակենտրոն մոտեցման ապահովման և անհրաժեշտ մասնագիտական աջակցության տրամադրման կարևորությունը: Այն նախատեսում է, որ տուժողները հնարավորություն ունենան օգտվելու իրավաբանական ներկայացուցչությունից, այլ պաշտպանության միջոցներից և աջակցության ծառայություններից, այդ թվում՝ հաշվի առնելով որոշակի խմբի կանանց առանձնահատուկ կարիքները:

ՄԱԿ-ի կարևորագույն ծառայությունների փաթեթը բռնության ենթարկված կանանց համար

ՄԱԿ-ի կարևորագույն ծառայությունների փաթեթը բռնության ենթարկված կանանց և աղջիկների համար հրատարակվել է 2015 թվականին: Այն նախատեսում է արդարադատության ծառայությունների ստանդարտներ՝ ներառյալ այն դատական ընթացակարգերը, որոնք առաջնահերթություն են տալիս բռնության ենթարկվածների անվտանգությանը և արդարադատության հասանելիությանը: Փաթեթը ներառում է ստանդարտներ բոլոր փուլերի, այդ թվում՝ նախաքննության, դատաքննության, հետդատավարական գործընթացների համար: Ընդ որում՝ այս ստանդարտները վերաբերում են ոչ միայն քրեական, այլև վարչական, քաղաքացիական և ընտանեկան գործերով գործընթացներին:

Ըստ փաթեթի՝ արդարադատության ծառայություններ տրամադրելիս պետք է ապահովել, որ կանայք և աղջիկները հնարավորություն ունենան իրավական միջոցներից օգտվելու *ժամանակին, անվտանգ ու գենդերազգայուն միջավայրում:* Դա ենթադրում է նաև, որ հասանելի պետք է լինեն պաշտպանության միջոցները, իրավաբանական ներկայացուցչությունը և աջակցությունը դատական գործընթացների ամբողջ ընթացքում: Տուժողներին ծառայությունները պետք է տրամադրվեն *չքննադատող, աջակցող և ապահով միջավայրում, նրանք պետք է հնարավորություն ունենան լիարժեք մասնակցելու դատավարության գործընթացին, նրանց պետք է վերաբերվեն հարգալից և տարիքին համապատասխան՝ խուսափելով կրկնազոհացումից, նրանց գաղտնիությունն ու արժանապատվությունը պետք է ապահովվեն և այլն*[13]*:*

[12]https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/Library/Publications/2012/12/UNW_Legislation-Handbook%20pdf.pdf

[13]https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/Library/Publications/2015/Essential-Services-Package-Module-3-en.pdf

Ծառայությունների ամբողջական փաթեթը տե՛ս այստեղ՝ https://www.unwomen.org/en/digital-library/publications/2015/12/essential-services-package-for-women-and-girls-subject-to-violence

Այս փաստաթուղթը նախատեսում է համապարփակ շրջանակ՝ ապահովելու ԸԲ և ԳԲ ենթարկվածների նկատմամբ դատական համակարգերի զգայուն ու կարիքահեն մոտեցումը: Այն ընդգծում է բազմակողմանի մոտեցման կարևորությունը, որտեղ արդարադատության ծառայություններն ինտեգրվում են առողջապահության, սոցիալական և իրավական աջակցության ծառայություններին՝ ապահովելու բռնության ենթարկվածների համապարփակ խնամքը:

Եվրոպայի խորհրդի ուղեցույցներ կանանց արդարադատության մատչելիության վերաբերյալ

ԵԽ-ի կողմից հրատարակվել են մի շարք ուղեցույցներ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների և արդարադատության աշխատակիցների արդյունավետության բարձրացման, արդյունավետ դատական արձագանքի մասին[14]: ԵԽ-ի կողմից հրատարակվել է նաև «Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների և դատախազների վերապատրաստման» ձեռնարկը, որի հիման վրա ստեղծվել է «Կանանց համար արդարադատության մատչելիություն» ձեռնարկը իրավաբանների համար: Դրանում ներկայացված են գենդերազգայուն արդարադատության համակարգի կարևոր բաղադրիչներ հանդիսացող լավ գործելակերպերն ու փորձը, որոնք պետք է կիրառվեն արդարադատության մասնագետների կողմից կանանց նկատմամբ բռնության դեպքերի քննության ժամանակ: Ձեռնարկում ներկայացված պատշաճ գործելակերպերը անդրադառնում են հետևյալ հարցերին.

- *Իրավական դիրքորոշում (locus standi).*
- *Նախնական դատավարական հարցեր և քննություն, այդ թվում՝ սահմանելով որոշ նկատառումներ, որոնք պետք է հաշվի առնվեն իրավապահների և դատարանների կողմից: Օրինակ՝ դատախազները սովորեն հանդիպումների ընթացքում ճանաչել տագնապի նշանները և խուսափեն ցանկացած երկրորդային զոհացումից (կրկնազոհացումից), իսկ դատավորները քայլեր ձեռնարկեն գենդերազգայուն մոտեցում ապահովելու համար, ինչպես նաև քննության և ապացույցների հավաքման փուլերում ձգձգումներ*

[14]Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների և արդարադատության աշխատակիցների արդյունավետության բարձրացում. դասընթացավարների ուսուցման ձեռնարկ, ԵԽ, 2016 թ., https://rm.coe.int/16806acdfd
Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելում և պայքար. իրավապահ մարմինների և արդարադատության աշխատակիցների վերապատրաստման ուսումնական ռեսուրս, ԵԽ, 2016 թ., https://rm.coe.int/16805970c1

չլինեն և այլն.

- *Ապացուցողական խնդիրներ, այդ թվում՝ կիրառել զոհակենտրոն մոտեցում, օրինակ՝ դատախազներից պահանջելով խուսափել բռնության ենթարկվածների վերաբերյալ ենթադրություններ անելուց, բռնության ենթարկվածի նկատմամբ նրբանկատ վերաբերմունք ցուցաբերել, խուսափել գենդերային կարծրատիպերից և այլն.*
- *Գործով տեսական դիրքորոշումը և իրավական հիմնավորում.*
- *Իրավական պաշտպանության միջոցներ.*
- *Պատժի նշանակում, որը պետք է լինի արդար, ոչ խտրական, համաչափ, միասնական և հետևողական, ինչպես նաև բռնություն ներառող գործերով պատժի հետաձգման, ազատազրկման պայմանների և պատժից ազատման մասին որոշումներ կայացնելիս պետք է հաշվի առնվեն բռնության ենթարկվածի կամ այլոց նկատմամբ հետագա բռնության ռիսկի գնահատման արդյունքները.*
- *Գենդերազգայուն գործերի և դատական նիստերի վարում, այդ թվում՝ կանանց անվտանգությանն առնչվող մտահոգությունները և ռիսկը կառավարել, հանդիպումներ պլանավորել և դատական նիստը կազմակերպել անվտանգ և հարմարավետ վայրում, ինչպես նաև տեղեկացնել բռնության ենթարկվածներին իրենց իրավունքների և օժանդակ ծառայությունների մասին և այլն.*
- *Վկաների և դատավարության մասնակիցների հետ փոխգործակցում.*
- *Փորձագետների և դատարանի բարեկամի (amici curiae) դեր.*
- *Վեճերի այլընտրանքային լուծում[15]:*

[15] https://rm.coe.int/methodology-womens-access-to-justice-arm-pgg/16809c8282

Ուսումնասիրելով միջազգային լավագույն պրակտիկաները դատական համակարգում՝ կարող ենք եզրակացնել, որ տարբեր երկրներում կիրառվում են ԸԲ և ԳԲ դեպքերում բազմաթիվ և տարատեսակ մեխանիզմներ և մեթոդներ՝ ապահովելու կանանց արդարադատության հասանելիությունը, միաժամանակ հաշվի առնելով վերջիններիս առանձնահատուկ կարիքները: Այդպիսի մեխանիզմներ և պրակտիկաներ են՝

- Մասնագիտացված դատարանների առկայությունը.
- Պաշտպանության միջոցները.
- Ռիսկերի գնահատման գործիքները.
- Տուժողների բազմամասնագիտական աջակցությունը.
- Դատավորների ուսուցումը.
- Հեռակա վկայությունը, թվային տեխնոլոգիաների օգտագործումը.
- Հսկողության մեխանիզմները.
- Հանրային իրազեկվածությունը և այլն:

Մասնագիտացված դատարաններ ընտանեկան բռնության դեպքերում

Մի շարք երկրներ ստեղծել են մասնագիտացված դատարաններ՝ ԸԲ և ԳԲ գործերը քննելու համար: Օրինակ՝ **Իսպանիան** ստեղծել է գենդերային բռնության դեմ պայքարի մասնագիտացված դատարաններ (Juzgados de Violencia sobre la Mujer)՝ համաձայն «Organic Law 1/2004» օրենքի: Այս դատարաններն ընդգրկում են իրավաբանական, հոգեբանական և սոցիալական ծառայություններ՝ ապահովելով բռնության ենթարկվածների համապարփակ աջակցությունը: Դատավորներն ու անձնակազմը ստանում են մասնագիտացված վերապատրաստում ընտանեկան բռնության ընթացքի և տրավմայի վրա հիմնված պրակտիկաների վերաբերյալ՝ նպատակ ունենալով ապահովելու բռնության ենթարկվածների նկատմամբ արժանապատիվ և հարգալից վերաբերմունք[16]:

[16]https://guiasjuridicas.laley.es/Content/Documento.aspx?params=H4sIAAAAAAAEAMtMSbF1jTAAAUNjQxNjtbLUouLM_DxbIwMDCwNzAwuQQGZapUt-ckhlQaptWmJOcSoALb0e4DUAAAA=WKE#:~:text=Son%20los%20%C3%B3rganos%20jurisdiccionales%20que,y%20estable%2C%20a%C3%BAn%20sin%20convivencia.

Պաշտպանության միջոցներ և ռիսկի գնահատման գործիքներ

Պաշտպանության միջոցները և ռիսկի գնահատման գործիքները կարևոր են տուժողների անվտանգությունն ապահովելու համար: **Միացյալ Թագավորությունում** ընտանեկան բռնության պաշտպանության միջոցները՝ համաձայն 2010 թվականի «Հանցագործության և անվտանգության մասին» օրենքի, թույլ են տալիս ոստիկանությանը տրամադրել միջոցներ՝ արգելելով հանցագործներին կապ հաստատել տուժողների հետ մինչև 28 օր, նույնիսկ եթե մեղադրանք չի ներկայացվել: Բացի այդ՝ օրենքը թույլ է տալիս ստուգել, թե արդյոք անձն ունի ընտանեկան բռնության պատմություն՝ ապահովելով վաղ միջամտության մեխանիզմի կիրառում[17]:

Տուժողների աջակցություն և պաշտպանություն

Տուժողների աջակցությունն ու պաշտպանությունը կարևոր են զոհակենտրոն մոտեցման ապահովման համար: Այսպես՝ **Ավստրալիայում** ստեղծվել են Մասնագիտացված ընտանեկան բռնության դատարաններ, որոնք սերտորեն համագործակցում են հասարակական և համայնքային կազմակերպությունների հետ՝ առաջարկելով մի շարք ծառայություններ: Շեշտը դրվում է մասնագիտացված աջակցության ծառայությունների մատուցման վրա. դատարանում կամ մեկ այլ կազմակերպությունում լինում է աշխատակից, որն աջակցում է ընտանեկան բռնության ենթարկվածներին դատական գործընթացում, և հաճախ նրանք պատասխանատու են նաև բռնության ենթարկվածներին այլ ծառայությունների ուղղորդելու համար, այդ թվում՝ իրավաբանական խորհրդատվություն և բնակարանային աջակցություն ստանալու հարցերում[18]:

Դատավորների ուսուցում և գենդերազգայունություն

Ուսուցումը անհրաժեշտ է, որպեսզի դատավորները, քննիչները, դատախազները և դատական անձնակազմը զգայուն արձագանքեն ընտանեկան բռնության և գենդերային բռնության դեպքերին: Մասնավորապես, **Արգենտինայում** Ընտանեկան բռնության գրասենյակը վերապատրաստում է դատավորներին և դատական անձնակազմին տրավմայի վրա հիմնված պրակտիկաների և

[17]https://www.legislation.gov.uk/ukpga/2010/17/section/28

[18]https://www.alrc.gov.au/publication/family-violence-a-national-legal-response-alrc-report-114/32-specialisation-3/specialised-family-violence-courts/

գենդերազգայուն ընթացակարգերի վերաբերյալ[19]: Նմանապես, **Եվրոպական միության** «Գենդերային հավասարության ուսուցումը դատական համակարգի համար» ծրագիրը տրամադրում է ուսուցում գենդերային կարծրատիպերի, ընտանեկան բռնության և բռնության ենթարկվածների իրավունքների վերաբերյալ՝ ապահովելով, որ դատական համակարգերը զգայուն լինեն բռնության ենթարկվածների կարիքների նկատմամբ[20]:

Հեռավար վկայություն և ապահով դատական միջավայր

Հեռավար վկայությունն ու անվտանգ դատական միջավայրը կարևոր են բռնության ենթարկվածներին վերատրավմատիզացիայից պաշտպանելու համար: **Հնդկաստանում** Արագացված դատաքննության հատուկ դատարանները (Fast Track Special Courts) թույլ են տալիս տուժողներին վկայություն տալ տեսակապի միջոցով՝ խուսափելու հանցագործների հետ անձնական շփումից: Դատարանները նաև տրամադրում են առանձին սպասասրահներ և անվտանգ տրանսպորտ տուժողների համար՝ ապահովելով նրանց անվտանգությունը[21]:

ԱՄՆ-ում (Կալիֆոռնիա) դատարաններն օգտագործում են հեռակա վկայությունը ԸԲ գործերի դեպքում: Բռնության ենթարկվածները կարող են վկայություն տալ անվտանգ վայրից, ինչը կնվազեցնի նրանց վախեցնելու ռիսկը և կապահովի նրանց անվտանգությունը: Մասնավորապես, ընտանեկան բռնության կամ տարեցների նկատմամբ բռնության ենթարկվածները հայտնել են, որ ավելի քիչ անհանգստություն և սթրես են ունեցել, քանի որ ստիպված չեն եղել դատարան ներկայանալ հանցագործի հետ: Հեռավար վկայությունն ու դատավարությունը նպաստում են և կարող են նվազեցնել մասնակիցների հետագա տրավմատիզացումը և դատարանի դահլիճում կոնֆլիկտի հավանականությունը[22]:

Հսկողություն և պատասխանատվության մեխանիզմներ

Հսկողությունն ու պատասխանատվության մեխանիզմները կարևոր են՝ ապահովելու, որ դատական համակարգերը հետևեն միջազգային ստանդարտներին: Օրինակ՝ **Բրազիլիայում** իրականացվում են «Maria

[19]https://www.ovd.gov.ar/ovd/
[20]https://commission.europa.eu/strategy-and-policy/policies/justice-and-fundamental-rights/gender-equality/who-we-work-gender-equality/mutual-learning-programme-gender-equality_en
[21]https://dashboard.doj.gov.in/fast-track-special-court/
https://doj.gov.in/fast-track-special-court-ftscs/#
[22]https://newsroom.courts.ca.gov/news/remote-proceedings-have-enhanced-californias-courtrooms-and-improved-court-participation

da Penha Law» օրենքի[23] կիրարկման դիտարկումներ՝ հետևելով ընտանեկան բռնության դեմ օրենքների իրականացմանը, և տրամադրում են տվյալներ գործերի արդյունքների վերաբերյալ: Այս դիտարկումների ընթացքում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները համագործակցում են հետազոտական կենտրոնների հետ՝ ուշադրության ներքո պահելով դատարաններին՝ պատասխանատու լինելու դատավարության ուշացումների կամ գործերի սխալ կառավարման համար[24]:

Ֆիլիպիններում ստեղծվել է Գենդերի և զարգացման ֆոկալ կետերի համակարգ (Gender and Development Focal Point System)՝ դատարաններում գենդերային զգայուն քաղաքականությունների համապատասխանությունը վերահսկելու համար: Այս համակարգը հավաքում է տվյալներ ԳԲ գործերի վերաբերյալ և տրամադրում առաջարկներ դատական գործընթացները բարելավելու նպատակով՝ ապահովելու, որ դատարանները հետևեն միջազգային ստանդարտներին[25]:

Ինտեգրված ծառայություններ և բազմակողմանի համագործակցություն

Ինտեգրված ծառայություններն ու բազմակողմանի համագործակցությունը կարևոր են տուժողներին համապարփակ աջակցություն ապահովելու համար: Նման պրակտիկա է առկա **Շվեդիայում**, որտեղ իրավապահները, սոցիալական ծառայությունները և ՀԿ-ները միավորվում են՝ ապահովելով համակարգված աջակցություն ընտանեկան բռնության ենթարկվածներին: Նրանք կարող են օգտվել իրավական, բժշկական և հոգեբանական ծառայություններից մեկ տեղում, ինչն ապահովում է նրանց կարիքների բավարարումը[26]:

Նոր Զելանդիայում գործող Ինտեգրված անվտանգության արձագանքի (Integrated Safety Response) մոդելը ներառում է ոստիկանության, դատարանների և սոցիալական ծառայությունների համագործակցությունը՝ գնահատելու բռնության ռիսկը և տրամադրելու հարմարեցված աջակցություն տուժողներին: Այս Արձագանքի թիմը կանոնավոր կերպով վերանայում է գործերը՝ ապահովելով, որ անձանց կարիքները բավարարվեն՝ նվազեցնելով կրկնազոհացումը և բարելավելով տուժողների անվտանգությունը: Թիմը, ըստ էության,

[23]https://www.institutomariadapenha.org.br/assets/downloads/maria-da-penha-law.pdf
[24]https://archive.ids.ac.uk/pathwaysofempowerment/www.pathwaysofempowerment.org/archive_resources/organizing-to-monitor-implementation-of-the-maria-da-penha-law-in-brazil.html?utm_source=chatgpt.com
[25]https://www.phcc.gov.ph/gender-and-development/gfps
[26]https://victim-support.eu/news/strengthening-victim-support-victim-support-swedens-new-partnership-with-the-swedish-police-service/

բազմաֆունկցիոնալ միջամտություն է, որը նախատեսված է ապահովելու բռնության ենթարկվածների և երեխաների անմիջական անվտանգությունը, ինչպես նաև աշխատելու հանցագործների հետ՝ հետագա բռնությունը կանխելու համար: Թիմի հիմնական առանձնահատկությունները ներառում են նվիրված անձնակազմ, ֆինանսավորվող մասնագետ, ծառայություններ բռնության ենթարկվածների և հանցագործների համար, ամենօրյա ռիսկերի գնահատում և ստուգում, ընտանեկան անվտանգության պլաններ, դեպքերի կառավարման էլեկտրոնային համակարգ և ինտենսիվ գործերի կառավարման մոտեցում բարձր ռիսկային ընտանիքների հետ աշխատելու համար[27]:

Հանրային իրազեկում և իրավաբանական օգնություն

Հանրային իրազեկումն ու իրավաբանական օգնությունը նշանակալի դեր ունեն ԸԲ կամ ԳԲ ենթարկված անձանց համար՝ ապահովելու արդարադատությունից օգտվելու նրանց իրավունքի իրացումը: Այն կարևորվում է, օրինակ, **Բանգլադեշում**, որտեղ Ճգնաժամային կենտրոնները (One-Stop Crisis Centre) տրամադրում են իրավաբանական օգնություն, բժշկական խնամք և խորհրդատվություն գենդերային բռնության ենթարկվածներին: Այս կենտրոնները նաև իրականացնում են համայնքային աշխատանք՝ կրթելով հանրությանը ընտանեկան բռնության մասին օրենքների վերաբերյալ՝ ապահովելով, որ բռնության ենթարկվածները տեղյակ լինեն իրենց իրավունքների մասին և հնարավորություն ունենան օգտվելու արդարադատությունից[28]:

[27] https://www.police.govt.nz/about-us/programmes-and-initiatives/integrated-safety-response-isr#:~:text=ISR%20is%20a%20multi%2Dagency,and%20wh%C4%81nau%20at%20the%20centre.
[28] https://www.mspvaw.gov.bd/

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ուսումնասիրելով միջազգային համատեքստը և անդրադառնալով տարբեր երկրներում դատական մշտադիտարկումների վերլուծությունների ու հետազոտությունների արդյունքներին՝ կանանց արդարադատության մատչելիության և նրանց իրավունքների վերականգնման տեսանկյուններից, ի թիվս մի շարք մարտահրավերների, բացահայտվել են հետևյալ խնդիրներն ու խոչընդոտները.

- Դատաքննության երկար ընթացք.
- Դատարանների ծանրաբեռնվածություն.
- Դատավարության մասնակիցների բացակայություն.
- Դատական նիստերի երկար տևողություն.
- Տուժողների անվտանգության ապահովման խնդիրներ.
- Դատարանի և դատավարության մասնակիցների ոչ պատշաճ վերաբերմունք տուժող կանանց նկատմամբ և այլն:

Դատաքննության երկար ընթացքի պատճառներ

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (UNDP) «Արդարադատության խոչընդոտների ուսումնասիրություն գենդերային բռնության ենթարկվածների համար» զեկույցում նշվում է, որ Բանգլադեշում գենդերային բռնության գործերով դատավարությունները հաճախ ձգձգվում են՝ պայմանավորված փաստաթղթերի հավաքման դժվարություններով, վկաների բացակայությամբ կամ նրանց հրավիրելու գործընթացի անարդյունավետությամբ, հատկապես գյուղական շրջաններում, և դատական համակարգի ծանրաբեռնվածությամբ[29]: Իսկ ըստ Asia Foundation-ի զեկույցի՝ Շրի Լանկայում դատական նիստերը հաճախ հետաձգվում են՝ պայմանավորված դատավորների պակասի և դատական համակարգի արդյունավետության խնդիրներով[30]:

Դատարանների ծանրաբեռնվածություն

UNDP-ի՝ գենդերային բռնության ենթարկվածների համար արդարադատության մատչելիության ապահովման բացերը

[29]https://www.undp.org/laopdr/publications/report-examining-barriers-justice-survivors-gender-based-violence
[30]https://asiafoundation.org/wp-content/uploads/2024/08/Sri-Lanka_Inside-Justice-Learnings-Report_English.pdf

բացահայտելու վերաբերյալ ուսումնասիրությունում նշվում է Բանգլադեշում դատարանների ծանրաբեռնվածության խնդրի մասին, մասնավորապես այն, որ դատավորները տարեկան քննում են մեծ թվով գործեր, ինչը կարող է ազդել դատավարությունների որակի վրա[31]: Ըստ UNDP-ի զեկույցի՝ Լաոսում դատական համակարգի ծանրաբեռնվածությունը կարող է հանգեցնել դատական սխալների աճի[32]:

Նիստերի երկար տևողություն և մասնակիցների բացակայություն

Ըստ Asia Foundation-ի զեկույցի՝ Շրի Լանկայում մեղադրյալների բացակայությունը նիստերից և նիստերի կարճ տևողությունը կարող են խոչընդոտել արդարադատության մատչելիությունը՝ շեշտելով, որ կարող են դժվարություններ առաջացնել տուժողների պատմությունների լիարժեք ներկայացմանը[33]: Ըստ DCAF-Geneva Centre for Security Sector Governance-ի զեկույցի՝ Բոսնիայում հեռակա նիստերի ներդրումը կարող է նվազեցնել բացակայությունները և բարելավել դատավարությունների արդյունավետությունը[34]:

Տուժողների անվտանգությունը դատարաններում

Ինտերամերիկյան մարդու իրավունքների հանձնաժողովի (IACHR) զեկույցում նշվում է, որ տուժողները հաճախ վախենում են դատարանում մեղադրյալների հետ հանդիպելուց, ինչը կարող է խոչընդոտել նրանց վկայությունը: Այս վախը կապված է դատարաններում համապատասխան պաշտպանական միջոցների բացակայության հետ[35]: Բանգլադեշում նույնպես առկա է անվտանգության միջոցառումների պակաս, մասնավորապես՝ դատարանների մեծ մասը չունի առանձին սպասասրահներ տուժողների համար, ինչը կարող է ազդել նրանց անվտանգության զգացողության վրա[36]: Ինչը նշանակում է, որ այս պայմանները կարող են ազդել տուժողների պատրաստակամության վրա՝ խոչընդոտելով նրանց մասնակցությունը դատական գործընթացներին:

[31]https://www.undp.org/bangladesh/publications/study-identifying-gaps-and-concerns-ensure-access-justice-gender-based-violence-survivors-justice-sector-actors-perspective
[32]Տե՛ս նույն տեղում՝ UNDP Report – 26/03/2023:
[33]Տե՛ս նույն տեղում՝ AsiaFoundation 2021:
[34]https://www.dcaf.ch/monitoring-response-justice-system-domestic-and-gender-based-violence-2019
[35]https://iachr.org/women/Access07/chap1.htm
[36]Տե՛ս նույն տեղում՝ UNDP Study – 26/11/2023:

Դատական համակարգի վերաբերմունքը տուժողի նկատմամբ

Լաոսում առկա են կարծրատիպեր այս հարցերի շուրջ, մասնավորապես՝ որոշ դատավորներ դեռևս կարծում են, որ ընտանեկան բռնությունը մասնավոր հարց է, ինչը կարող է ազդել դատավարությունների արդարության վրա[37]: Իսկ Բանգլադեշում տուժողները հաճախ չեն վստահում դատական համակարգին, ինչը պայմանավորված է կարծրատիպերով և անտարբերությամբ[38]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ ԸԲ և ԳԲ դեմ պայքարում արդարադատություն իրականացնելը պետք է հիմնված լինի արդարության, կարեկցանքի և տուժողների անվտանգության ապահովման վրա: Միջազգային իրավական շրջանակները, տարածաշրջանային գործիքները և աշխարհի տարբեր երկրների լավագույն պրակտիկաները ապահովում են ճանապարհային քարտեզ՝ այս նպատակին հասնելու համար: Այս առումով կարևոր է ապահովել դատական գործընթացներում կանանց նկատմամբ գենդերազգայուն, հակախտրական, արժանապատվությունը հարգող, գաղտնիությունը պահպանող միջավայր: Պետք է կիրառել այնպիսի թվային և տեխնոլոգիական միջոցներ և այլ տեսակի մեթոդներ, որոնցով հնարավոր կլինի ապահովել դատավարության ժամանակին իրականացումը և խուսափել տուժողների կրկնազոհացումից: Մասնագիտացված դատարանների, պաշտպանության միջոցների, զոհակենտրոն և կարիքահեն մոտեցումների և պատասխանատվության մեխանիզմների ընդունմամբ՝ դատական համակարգերը կարող են ապահովել, որ ԸԲ և ԳԲ ենթարկվածները հնարավորություն ունենան հասանելի ու պատշաճ կերպով օգտվելու արդարադատությունից և աջակցությունից: Ի վերջո, ընտանեկան բռնության և գենդերային բռնության դեմ պայքարը պահանջում է պետության և քաղաքացիական հասարակության համատեղ ջանքեր, որտեղ դատական համակարգը կենտրոնական դեր է խաղում՝ պաշտպանելով բռնության ենթարկված կանանց իրավունքներն ու արժանապատվությունը:

[37]Տե՛ս նույն տեղում՝ UNDP Report – 26/03/2023:
[38]Տե՛ս նույն տեղում՝ UNDP Study – 26/11/2023:

ՄԱՍ 2

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՆԱԽՈՐԴԻՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Դատական նիստերի մշտադիտարկումը արդարադատության վերահսկողության ամենարդյունավետ գործիքներից է: Մարդու իրավունքների, օրենքի, ինչպես նաև դատավարական նորմերի խախտման դեպքերը հնարավոր է փաստագրել հետևողական մշտադիտարկման շնորհիվ: Իսկ ԸԲ գործերի մշտադիտարկումը հնարավորություն է տալիս արձանագրելու և վերլուծելու նաև գենդերային հիմքով խտրականության և կարծրատիպերի առկայությունն ու դրանց ազդեցությունը կանանց՝ արդարադատության մատչելիության իրավունքի պաշտպանության հարցում:

Ընտանեկան և գենդերային բռնության վերաբերյալ հարուցվող քրեական վարույթների քանակը վերջին տարիներին զգալիորեն աճել է: Եթե 2022 թվականին ՀՀ քննչական կոմիտեի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով քննվել է ընտանեկան բռնության գործերով նախաձեռնված 960 վարույթ, ապա հաջորդ՝ 2023 թվականին, դրանց թիվը գրեթե կրկնակի է՝ 1848 քրեական վարույթ[39]: 2024 թվականին աճի միտումը պահպանվել է՝ հասնելով աննախադեպ թվի՝ 2309 վարույթ[40]: Նախաձեռնված վարույթների թվի աճին զուգահեռ աճել է նաև դատաքննության փուլ հասնող գործերի քանակը, որի վերաբերյալ, սակայն, հստակ տեղեկատվություն պաշտոնական աղբյուրները չեն հաղորդում: Ներկայում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ՀՀ ընդհանուր իրավասության բոլոր դատարաններում քննվում են ԸԲ-ի վերաբերյալ քրեական գործեր, սակայն այդ գործերը քննող ոչ բոլոր դատավորներն են անցել համապատասխան վերապատրաստում գենդերազգայուն մոտեցում ցուցաբերելու և կանանց կրկնազոհացման (երկրորդային զոհացում - double victimization) չենթարկելու նպատակով: Այսպիսով՝ ընտանեկան և գենդերային բռնության վերաբերյալ դատական գործերի քննության մշտադիտարկումն ավելի մեծ կարևորություն է ստանում:

[39] 2023 թ-ին ավելացել են ընտանեկան բռնությունների դեպքերով դատարան ուղարկված վարույթները. ՔԿ, 27 մարտի, 2024, «Հետք», https://hetq.am/hy/article/165332

[40] 2024-ին Քննչական կոմիտեում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 2309 քրեական վարույթ, 12 մայիսի, 2025, «Առաջին լրատվական ալիք», https://www.1lurer.am/hy/2025/05/12/2024-%D5%AB%D5%B6-%D6%84%D5%B6%D5%B6%D5%B9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A5%D5%B8%D6%82%D5%B4-%D6%84%D5%B6%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A8%D5%B6%D5%B-F%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC-2-309-%D6%84%D6%80%D5%A5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9/1311641

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը դատական նիստերի մշտադիտարկման ավելի քան երկու տասնամյակի փորձ ունի, սակայն ընտանեկան բռնության վերաբերյալ գործերի մշտադիտարկումը համեմատաբար վերջերս է սկսել իրականացվել ՀՀ-ում: Մասնավորապես, 2019 թվականին իրականացված համապարփակ մի ուսումնասիրությամբ մշտադիտարկվել է 63 դատական նիստ, որոնցից 16-ը՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, մյուսները՝ մայրաքաղաքում: Զեկույցում արձանագրված է, որ «դատարանները հաճախ կիրառել են կա՛մ չեզոք, կա՛մ զոհայնացնող մոտեցումներ՝ հաշվի չառնելով կողմերի գենդերային, տարիքային և առողջական (հոգեկան առողջության խնդիրների դեպքում) առանձնահատկությունները, հաշվի չառնելով, որ չեզոք մոտեցումները կարող են առավել բացասական դիրքերում դնել արդեն իսկ նվազ բարենպաստ վիճակում գտնվող կողմին: Այս իրավիճակը ազդել է թե՛ լսված լինելու իրավունքի, թե՛ կողմերի հավասարության սկզբունքի լիարժեք իրացման վրա»:

Վերոնշյալ մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ դատական քննության ընթացքում դատարանը և դատաքննության մասնակիցներն արել են այնպիսի արտահայտություններ, որոնք կարծրատիպային են կամ վիրավորական են եղել կողմերից մեկի համար: Բացի այդ՝ արձանագրվել են բազմաթիվ խնդիրներ, որոնցից են գործի քննության հետաձգումները, տուժողների՝ փաստաբանի ուղեկցությամբ ներկայացված չլինելը, քրեական գործերի կարճումը հաշտության կամ հաշտեցման կիրառման միջոցով[41]:

Ընտանեկան բռնության վերաբերյալ դատական գործերի մեկ այլ ուսումնասիրությամբ կատարվել է 2019-2021 թվականներին քննված և դեռ ընթացքի մեջ գտնվող 174 քրեական գործերի քննության վերլուծություն, ինչպես նաև 8 քրեական գործերով դատական նիստերի մշտադիտարկում Երևանի և Արմավիրի ու Շիրակի մարզերի ընդհանուր իրավասության դատարաններում: Արձանագրվել են մի շարք խնդիրներ՝ ներառյալ գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման պահանջի խախտումներ, տուժողի և մեղադրյալի միջև հաշտության հիմքով զգալի թվով գործերի կարճում, բռնարարների նկատմամբ մեղմ պատիժների կիրառում:

Արձանագրվել է նաև, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021 թթ. քննված 68 քրեական գործերի 20,6%-ը կարճվել է դատարանում տուժողի և մեղադրյալի հաշտության հիմքով, իսկ մեղադրական վճռով ավարտված գործերի մեծամասնության

[41]Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերի դատական քննության հիմնախնդիրները Հայաստանում, զեկույց, «Իրավական հետազոտությունների և զարգացման կենտրոն», 2019 թ.:

դեպքում ընտրվել են ազատազրկման հետ կապ չունեցող պատիժներ, տուգանքներ՝ միջինում 100-250 հազար ՀՀ դրամի չափով[42]:

ԸԲ-ի վերաբերյալ քրեական գործերի դատական փուլի հաջորդ ծավալուն մշտադիտարկումը, որը նախորդել է սույն զեկույցում ներկայացված մշտադիտարկմանը, իրականացվել է «Իրավունքի ուժ» ՀԿ-ի կողմից 2021-2022 թվականներին: Այն ներառել է ոչ միայն դատական նիստի ընթացքի, այլև տուժող կանանց իրավունքների, անվտանգությանը սպառնացող իրավիճակների մշտադիտարկումը՝ ուշադրության կենտրոնում ունենալով մեղադրյալ-տուժող կամ մեղադրյալի մտերիմ անձ-տուժող հնարավոր շփումները ինչպես դատարանի դահլիճում, այդպես էլ դրանից դուրս: Դիտարկվել են 18 քրեական գործերով 40 դատական նիստ, որոնցից 20-ը՝ մայրաքաղաքում, 20-ը՝ 5 մարզերում: Նաև ուսումնասիրվել ու վերլուծվել են 2018-2022 թվականներին կայացված 25 դատական ակտեր:

Արձանագրված հիմնական խնդիրներից են եղել ողջամիտ ժամկետի պահպանման պահանջի խախտումը, դատաքննության անհարկի հետաձգումները, նիստերի կարճ տևողությունը և դրանց հետևանքով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները լրանալու հիմքով քրեական հետապնդման դադարեցումը: Մշտադիտարկված դատական նիստերը միջինում նշանակված ժամից ավելի քան 13 րոպե ուշացումով են սկսվել և տևել են ընդամենը 25-50 րոպե, որի ընթացքում հաճախ հնարավոր չի եղել առարկայական ու բովանդակալից դատաքննություն իրականացնել: Միաժամանակ, բռնության ենթարկված 14 կանանց հետ խորքային հարցազրույցներ են անցկացվել, որոնց վերլուծության ընթացքում արձանագրվել են մինչդատական փուլի մի շարք խնդիրներ, մասնավորապես այն, որ քննիչները վիրավորում, կշտամբում և ծաղրում են բռնության ենթարկված կանանց, ոստիկաններն ու քննիչները կանանց մղում են բողոքելու, իրավապահները փորձում են հաշտեցնել բռնարարին և բռնության ենթարկվածին[43]:

[42]Մշտադիտարկման արդյունքների վերլուծություն, «Խոցելի խմբեր, դատապարտյալներն ու ընտանեկան բռնության ենթարկված կանայք դատարաններում», «Քո պաշտպանը» փաստաբանական գրասենյակ. https://epfarmenia.am/sites/default/files/Document/Domestic_Violence_and_Convicted_People.pdf

[43]Բռնության ենթարկված կանանց՝ արդարադատության մատչելիության իրավունքը Հայաստանի Հանրապետությունում, զեկույց, էջ 29, «Իրավունքի ուժ» ՀԿ, 2022 թ. https://coalitionagainstviolence.am/wp-content/uploads/2024/10/%D5%A2%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A5%D5%B6%D5%A9%D5%A1%D6%80%D5%AF%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B6%D6%81-%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%A4%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B9%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%A8-%D5%B0%D5%B0-%D5%B8%D6%82%D5%B4.pdf https://coalitionagainstviolence.am/publication/brnutyan-entarkvats-kananc%d5%9d-ardaradatutyan-matcheliutyan-iravunqy-hayastani-hanrapetutyunum/

2022-2024 ԹԹ. ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ **փաստացի արձանագրվել և ուսումնասիրվել է 33 գործով 87 նիստ**, ընդ որում՝ 32-ը եղել են Երևանի և մարզային ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, իսկ **1-ը՝** Երևանի վերաքննիչ դատարանում քննվող գործեր [մանրամասն տե՛ս Աղյուսակ 1]:

Ուսումնասիրվել են հետևյալ դատական գործերը՝ ԿԴ/0294/01/21, ԱՐԴ/0190/01/19, ԷԴ/0490/01/18, ԵԴ/0110/01/22, ԿԴ/0030/01/21, ԵԴ/0749/01/22, ԱՐԴ/0267/01/23, ԱՐԴ/0170/01/21, ԵԴ/0643/01/23, ԵԴ/1188/01/22, ԵԴ/1245/01/22, ԵԴ1/0448/01/23, ԵԴ/0367/01/18, ԳԴ/0021/01/23, ԵԴ/1195/01/22, ԵԴ1/1240/01/23, ԱՎԴ/0169/01/23, ԵԴ1/1960/01/23, ԵԴ1/0992/01/23, ԵԴ1/1568/01/23, ԵԴ1/1413/01/23, ԵԴ/1140/02/21, ԵԴ/0373/01/22, ԱՎԴ/0099/01/22, ԱՐԴ/0115/01/21, ԵԴ/0073/01/22, ԵԴ/0627/01/21, ԵԴ/1129/01/22, ԱՐԱԴ/0139/01/22, ԳԴ4/0040/01/22, ԵԴ/0132/01/23, ԵԴ1/962/01/22, ԱՎԴ/0099/01/22:

Ըստ տարածքի՝ ուսումնասիրված 33 գործից 20-ը քննվել են Երևանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում (ընդհանուրի 61%-ը), **12-ը՝ մարզերի** ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում (ընդհանուրի 36%-ը), իսկ **1-ը՝** Երևանի վերաքննիչ դատարանում (ընդհանուրի 3%-ը) [մանրամասն տե՛ս Գրաֆիկ 1]:

Ըստ տարածքի՝ ուսումնասիրված 87 նիստերից 55-ը քննվել են Երևանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում (ընդհանուրի 63%-ը), **31-ը՝ մարզերի** ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում (ընդհանուրի 36%-ը), իսկ **1-ը՝** Երևանի վերաքննիչ դատարանում (1%-ը) [մանրամասն տե՛ս Գրաֆիկ 2.]:

Այս տվյալը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության գործերով հիմնական բեռն ընկնում է մայրաքաղաքի դատարանների վրա: Սա կարող է պայմանավորված լինել և՛ բնակչության խտությամբ, և՛ այն հանգամանքով, որ բռնության ենթարկվածներն ավելի պատրաստակամ են Երևանում հաղորդելու բռնության դեպքերի մասին և այլն:

Դատարան/Նստավայր	Գործեր	Նիստեր	Կայացել է	Չի կայացել
Արարատ և Վայոց ձոր	**3**	**9**	**3**	**6**
Արտաշատ	1	5	2	3
Մասիս	2	4	1	3
Արագածոտն	**1**	**3**	**2**	**1**
Աշտարակ	1	3	2	1
Գեղարքունիք	**2**	**6**	**3**	**3**
Գավառ/Մարտունի	1	5	2	3
Սևան	1	1	1	
Կոտայք	**2**	**5**	**4**	**1**
Աբովյան	2	5	4	1
Արմավիր	4	8	4	4
Էջմիածին	3	6	2	4
Արմավիր	1	2	2	
Երևան	**20**	**55**	**28**	**27**
Կենտրոն	7	15	8	7
Աջափնյակ	3	17	9	8
Շենգավիթ	6	14	6	8
Ավան	4	9	5	4
Վերաքննիչ	**1**	**1**		**1**
Երևան		1		1

Աղյուսակ 1



Գրաֆիկ 1



Գրաֆիկ 2

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԿԱՅԱՆԱԼԸ

Փաստացի արձանագրված 87 նիստից 44-ը կայացել են (ընդհանուրի 51%-ը), իսկ 43-ը չեն կայացել (ընդհանուրի 49%-ը) [մանրամասն տե՛ս Աղյուսակ 2, Գրաֆիկ 3]: **Եթե դիտարկենք մշտադիտարկված բոլոր 120 նիստերը, ապա ստացվում է, որ դրանցից 76-ը չեն կայացել, որը կազմում է ընդհանուրի ավելի քան 63%-ը:**

Երևանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում կայացել է 28 նիստ (Երևանի 51%-ը), իսկ 27-ը չի կայացել (Երևանի 49%-ը) [մանրամասն տե՛ս Գրաֆիկ 4]: Մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում կայացել է 16 նիստ (մարզերի 52%-ը), իսկ 15-ը չի կայացել (մարզերի 48%-ը) [մանրամասն տե՛ս Գրաֆիկ 5]: Երևանի վերաքննիչ դատարանի 1 նիստը չի կայացել:

Սա նշանակում է, որ գրեթե յուրաքանչյուր երկրորդ նիստ չի կայանում: Սա դատաքննության ձգձգման և արդարադատության հասանելիությունը սահմանափակող կարևոր ցուցիչ է: Տվյալները հստակ ցույց են տալիս դատական համակարգի արդյունավետության խնդիրը ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Կայացած և չկայացած նիստերի համամասնությունը գրեթե հավասար է թե՛ Երևանում և թե՛ մարզերում:

43 նիստերը չեն կայացել հետևյալ պատճառներով.

- **7-ով՝ մեղադրյալը չի ներկայացել.**
- **5-ով՝ տուժողը չի ներկայացել.**
- **5-ով՝ հանրային պաշտպանը ծանրաբեռնված է եղել,** այդ թվում՝ 1 դեպքում հանրային պաշտպանը դիմել է գործի նյութերին ծանոթանալու համար.
- **4-ով՝ դատախազը ծանրաբեռնված է եղել,**
- **2-ով՝ դատավորը արձակուրդում է եղել,**
- **2-ով՝ դատարան գնալու դժվարություններ են եղել,** այդ թվում՝ 1 դեպքում եղանակային վատ պայմանները թույլ չեն տվել գնալ դատարան, ընդ որում՝ երկու դեպքում մարզային դատարաններին է վերաբերում.
- **1-ով՝ դատավորը ծանրաբեռնված է եղել,** մասնավորապես՝ այլ նիստ է ունեցել.
- **1-ով՝ դատավորը դասընթացի է մասնակցել.**
- **1-ով՝ դատավորը վատառողջ է եղել.**

- 1-ով՝ դատախազը վատառողջ է եղել.
- 1-ով՝ վկան ուշացել է.
- 1-ով՝ փորձագետը հիվանդացել է.
- 1-ով՝ փաստաբանն է հետաձգել.
- 1-ով՝ կողմերը չեն ներկայացել.
- 1-ով՝ կողմերը չեն ստացել մեղադրական եզրակացությունը.
- 9-ով՝ տվյալներ չկան:



Աղյուսակ 2



Գրաֆիկ 3



Գրաֆիկ 4



Գրաֆիկ 5

Տվյալները ցույց են տալիս, որ դատական նիստերի կայացման արդյունավետությունը ներկայում մոտ 50% է, ինչը նշանակում է, որ համակարգում առկա են բազմաթիվ խոչընդոտներ: Հիմնական խնդիրներն են կողմերի բացակայությունը, դատական աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և լոգիստիկ դժվարությունները: Սա նշանակում է, որ Հայաստանում արդարադատական համակարգը զգալիորեն ծանրաբեռնված է, ինչի համար, նախևառաջ, անհրաժեշտ է վերանայել հանրային պաշտպանների, դատախազների և դատավորների կադրային քաղաքականությունն ու գործերի բաշխման մոդելները: Հարկավոր է նաև ապահովել նիստերի պատշաճ փաստագրում թե՛ թափանցիկության և թե՛ պատասխանատվության ապահովման տեսանկյունից: Մյուս կողմից՝ պետք է ներդնել դատավարության մշտադիտարկման և գնահատման միացյալ համակարգ, որը հիմնված կլինի տվյալների հավաքման և վերլուծության վրա: Միաժամանակ պետք է ապահովել, որ բոլոր կողմերը և մասնակիցները պատշաճ կերպով և ժամանակին ծանուցվեն նիստերի մասին: Բացի այդ, հաշվի առնելով նիստերի չկայացման պատճառները, անհրաժեշտ է զարգացնել

հեռավար նիստերի համակարգը, իրականացնել փոխարինող մասնագետների մեխանիզմ և վերապատրաստում այն պաշտոնյաների համար, որոնք ներգրավված են ընտանեկան բռնության գործերում:

Այսպիսով՝ առկա են դատական գործընթացների բարձր անարդյունավետություն ու ձգձգումներ, որոնք բացասաբար են անդրադառնում հատկապես ընտանեկան բռնության ենթարկվածների վրա՝ վտանգելով նրանց ապահովությունն ու խաթարելով արդարադատության հասանելիությունը:

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ԿԱՅԱՆԱԼԸ

87 նիստերից 42-ը ուշացումով են սկսվել (ընդհանուրի 48%-ը) [մանրամասն տե՛ս Աղյուսակ 3, Գրաֆիկ 6], ընդ որում՝ Երևանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 55 նիստերից 24-ը ուշացումով են սկսվել (Երևանի 44%-ը) [մանրամասն տե՛ս Գրաֆիկ 7], իսկ մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 31 նիստերից 18-ն են ուշացումով սկսվել (մարզերի 58%-ը) [մանրամասն տե՛ս Գրաֆիկ 8]: Մնացած դեպքերում չի նշանակում, որ Երևանի և մարզային դատարաններում առկա նիստերը ժամանակին են կայացել: Դրանք կարող են ներառել և՛ ժամանակին կայացած, և՛ չկայացած նիստերը, ինչպես նաև այն դեպքերը, երբ առկա չեն եղել տվյալներ, որով հնարավոր կլիներ պարզեր՝ ուշացումով են սկսվել, թե ոչ: Դրանց թվում է նաև Երևանի վերաքննիչ դատարանի մեկ նիստը, որի վերաբերյալ տվյալ ևս չկա:

Դատարան/Նստավայր	Նիստեր	Նիստը ուշացումով է կայացել
Արարատի և Վայոց ձորի	**9**	**7**
Արտաշատ	5	4
Մասիս	4	3
Արագածոտն	**3**	**2**
Աշտարակ	3	2
Գեղարքունիք	**6**	**2**
Գավառ/Մարտունի	5	1
Սևան	1	1

Կոտայք	**5**	**4**
Աբովյան	5	4
Արմավիր	**8**	**3**
Էջմիածին	6	2
Արմավիր	2	1
Երևան	**55**	**24**
Կենտրոն	15	9
Աջափնյակ	17	4
Շենգավիթ	14	7
Ավան	9	4

Աղյուսակ 3

41 դեպքում նիստի ուշ սկսվելը տևել է 1-49 րոպեի, ընդ որում՝ 11 դեպքերում՝ 30-49 րոպեի, իսկ 19 դեպքերում՝ 10-29 րոպեի միջակայքում:

12 նիստի ուշ մեկնարկի դեպքում դատավորն անդրադարձել է ուշ սկսելու պատճառին, այդ թվում՝ 7-ում՝ Երևանում, իսկ 5-ում՝ մարզերում: **21 դեպքում դատավորը չի անդրադարձել** նիստը ուշ սկսելու պատճառին, այդ թվում՝ 12-ում՝ Երևանում, իսկ 9-ում՝ մարզերում:

Միայն 7 դեպքով է հայտնի նիստը ուշ սկսելու պատճառը, որտեղ՝

- *1-ով պաշտպանը այլ նիստով կալանքի որոշման քննարկման է մասնակցել, որի պատճառով ուշ է եկել.*
- *1-ով՝ նիստից առաջ դատավորը, մեղադրյալն ու մեղադրողը նիստերի դահլիճում են գտնվել՝ քննարկելով վկայի ներկայանալու հարցը.*
- *1-ով՝ տուժողի ներկայացուցիչը տեխնիկական խնդիրներ է ունեցել՝ կապված իր լիազորագրի հետ, մասնավորապես՝ պետք է տպվեր հանրային պաշտպանի գրասենյակից տրված էլեկտրոնային փաստաթուղթը .*
- *1-ով՝ ուշացել է մեղադրյալի փաստաբանը.*
- *3-ով՝ դատավորը ծանրաբեռնված է եղել, ընդ որում՝ այդ բոլոր 3 դեպքերը Երևանի դատարանին են վերաբերում:*



Գրաֆիկ 6



Գրաֆիկ 7



Գրաֆիկ 8

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս տվյալները, դատական նիստերի գրեթե կեսը ուշացումով է սկսվել, ինչը լուրջ ցուցիչ է դատական գործընթացների կազմակերպչական անարդյունավետության մասին: Նիստերի ուշ սկսվելու բարձր տոկոսը հուշում է նաև համակարգի ռեսուրսային խնդիրների մասին: Կարող ենք պնդել, որ դատական համակարգում զգալիորեն առկա է նաև ժամանակի կառավարման խնդիր: Մարզերում ուշացումներն անհամեմատ ավելի շատ են եղել, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես ռեսուրսների սակավությամբ, այնպես էլ ենթակառուցվածքային խնդիրներով, օրինակ՝ փաստաբանների և տուժողների՝ ճանապարհի կամ եղանակի հետ կապված դժվարություններով: Մասնավորապես, ինչպես նշվել էր վերոգրյալում, երկու դեպքում եղանակային վատ պայմանները թույլ չեն տվել գնալ մարզային դատարաններ, և նիստերն ընդհանրապես չէին կայացել: Դատական նիստերի ուշացումների նման մասշտաբային բնույթը ազդում է արդարադատության պատշաճ ապահովման վրա, հատկապես՝ ընտանեկան և գենդերային բռնության գործերով:

Ուշացումների տևողությունների տվյալները վերլուծելիս կարող ենք եզրակացնել, որ նիստերի ուշացումները ոչ թե տեխնիկական կամ 5-10-րոպեանոց փոքր բացթողումներ են, այլ երբեմն լուրջ խախտումներ, որոնք կարող են խաթարել դատական նիստերի բնականոն ընթացքը և տուժողների արդարադատության մատչելիությունը:

Եթե հաշվի առնենք, որ միայն 12 դեպքում է դատավորը անդրադարձել ուշացման պատճառին, իսկ 21 դեպքում բացարձակապես որևէ արձագանք չի եղել, կարող ենք եզրակացնել, որ դա վտանգավոր պրակտիկա է՝ թափանցիկության և հաշվետվողականության տեսանկյունից: Բացի այդ՝ սա ենթադրում է դատավորների ընդհանուր անպատասխանատվության կամ դատական նիստերի ադմինիստրատիվ վերահսկողության անբավարար մակարդակի մասին: Սա կարող է դատական համակարգի նկատմամբ վստահության խաթարման կամ դրա խորացման հիմք լինել: Արդյունքում տուժողները դատական համակարգի անարդյունավետության պատճառով ավելի խոցելի վիճակում են հայտնվում:

Ուստի հարկավոր է ձեռնարկել մի շարք քայլեր՝ դիտարկելով նիստերի պլանավորման բարելավման հնարավորությունները՝ հաշվի առնելով դատավորների և պաշտպանների ծանրաբեռնվածությունը, և տեխնիկական ապահովման կատարելագործումը, որպեսզի բացառվեն տեխնիկական խնդիրներից բխող ուշացումները: Միաժամանակ, համակարգային խնդիրների ռացիոնալ լուծման համար անհրաժեշտ է իրականացնել ուշացման պատճառների պարտադիր գրանցում և

վերլուծություն, ինչպես նաև մարզերում լոգիստիկ ու կազմակերպչական խնդիրների վերացման ուղղությամբ քայլեր մշակել՝ հաշվի առնելով մարզային առանձնահատկություններն ու մարզերում ուշացման ավելի բարձր տոկոսը:

> **4 դեպքում դատարանը անդրադարձել է հաջորդ նիստը ուշ նշանակելու հարցին,** մասնավորապես՝ 2 դեպքում մատնանշել է դատարանի ծանրաբեռնվածության պատճառը, իսկ 4 դեպքում չի անդրադարձել: Մնացած դեպքերում առկա չեն տվյալներ հաջորդ նիստը ուշ նշանակելու հարցին անդրադառնալու վերաբերյալ:
>
> **20 դեպքում արձանագրվել է, որ նիստի ժամանակն արդյունավետ է օգտագործվում,** սակայն մնացած դեպքերի վերաբերյալ տվյալներ չկան:

Իհարկե, 20 դեպքում արձանագրվել է, որ նիստի ժամանակը արդյունավետ է օգտագործվում, ինչը դրական ցուցանիշ է դատական գործընթացի կազմակերպման տեսանկյունից, սակայն եթե դիտարկում ենք ընդհանուր նիստերի շրջանակում, դա բավարար չէ:

Միաժամանակ, 4 դեպքում դատարանը նշել է, որ հաջորդ նիստի ուշ նշանակման խնդիրը հիմնականում ծանրաբեռնվածության պատճառով է, որը կրկին մատնանշում է դատավորների և դատական համակարգի ընդհանուր ծանրաբեռնվածության մասին: Սա միանշանակ կարող է բացասաբար անդրադառնալ գործերի քննության արագության վրա՝ անհարկի ձգձգելով դատաքննությունը, և ազդել կողմերի իրավունքների իրացման վրա:

ՏՈՒԺՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ

> **16 դեպքում տուժողը եղել է մեղադրյալի կինը, 7-ում՝ նախկին կինը, 6-ում՝ զուգընկերը, այդ թվում՝ 1-ում՝ նախկին նշանածը, 2-ում՝ մայրը, 1-ում՝ ընկերոջ, մերձավոր ազգականի կինը, 1-ում՝ տվյալներ չկան:**

Կանանց նկատմամբ բռնությունը ներառել է ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական, սեռական և այլ բռնության տեսակները, որոնք դրսևորվել են հետևյալ ձևերով.

- *Ծեծել, ֆիզիկական ուժեղ ցավ, ֆիզիկական ներգործություն, առողջությանը թեթև և ծանր վնաս պատճառել.*
- *Կյանքից զրկելու իրական սպառնալիք հնչեցնել, հոգեկան*

ներգործություն, հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու դիտավորությամբ հոգետրավմատիկ գործողություններ կատարել, արգելել շփվել հարազատների հետ, վերահսկել հեռախոսազանգերը, սոցիալապես մեկուսացնել, ստիպել կտրել երկար մազերը.

- *Սեռական բնույթի այլ գործողություններ կատարել, հայհոյանքներ հնչեցնել.*
- *Սպանություն, սպանության փորձ կատարել.*
- *Կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործել, խուլիգանություն, կողոպուտ իրականացնել.*
- *Ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրենսդրության պահանջներ չկատարել, մասնավորապես՝ չկատարել անհետաձգելի միջամտության որոշման պահանջները, բնակության վայր այցելելու արգելքի պահանջները և այլն:*
- *Որոշ դատական գործեր ներառել են տնտեսական բռնության տարրեր, օրինակ՝ նշվել է նյութական կախվածության մեջ լինելու հանգամանքը, սակայն չի որակվել որպես այդպիսին:*

ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԸՆԹԱՑՔԸ

Մշտադիտարկվել են 1-ից մինչև 10 դատական նիստեր, այդ թվում՝ եղել է 1 դատական գործով 10 դատական նիստ, 4 գործով՝ 5 նիստ, 4 գործով՝ 4 նիստ, 5 գործով՝ 3 նիստ, 6 գործով՝ 2 նիստ, իսկ մնացած գործերով՝ 1-ական:

Նշանակված դատական նիստերի միջև նվազագույն օրերի միջակայքը եղել է 1 օր, իսկ առավելագույնը՝ 618 օր, միջինը՝ 47 օր [մանրամասն տե՛ս Աղյուսակ 4]: Նշանակված դատական նիստերի միջև ամենաերկար միջակայքը՝ 300+ օրեր, ունեցել են 2 գործ, որոնք եղել են 618 օր և 444 օր տևողությամբ: Դրանց հաջորդել են 101-ից մինչև 300 օր տևողությամբ դատական նիստերի միջև ընկած միջակայքերը, որոնք ունեցել են հետևյալ ժամանակահատվածները՝ 239, 182, 180, 179 օրեր և այլն (մանրամասն տե՛ս Աղյուսակ 4):

Տևողություն (օր)	Քանակ (միջակայք)	Տոկոս (%)
1–30	25	47.2%
31–100	16	30.2%
101–300	10	18.9%
300+	2	3.8%

Աղյուսակ 4

ԵԴ1/1413/01/23 դատական գործով ուսումնասիրվել է ամենաշատ թվով՝ 10 դատական նիստ, որտեղ առաջին և վերջին դատական նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է շուրջ 6 ամիս: Ընդ որում՝ այս 10 նիստերից 6-ը չեն կայացել:

Երեք և ավելի նիստեր մշտադիտարկած դատական գործերով առաջին և վերջին նիստերի միջև ամենաքիչ տևողությունը եղել է 2 ամիս 15 օր (3 նիստ), իսկ ամենաերկարը՝ 1 տարի 9 ամիս 14 օր (3 նիստ), մինչդեռ 10 նիստերի միջև եղած տևողությունը եղել է մոտ 6 ամիս:

Պետք է առանձնահատուկ նշել նաև, որ որոշ դատական գործերով նիստերի մեծամասնությունը չի կայացել, որքան էլ նիստերի միջև եղած տևողությունը կարճ է եղել: Օրինակ՝ ԵԴ1/1960/01/23 դատական գործով մշտադիտարկված 5 նիստերից 4-ը չի կայացել:

Յուրաքանչյուր գործով նշանակված դատական նիստերի միջև ընկած ժամանակահատվածի մանրամասն վերլուծությունը նկարագրված է ներքոգրյալում (այստեղ վերլուծված են երկու և ավելի դատական նիստեր ունեցող դատական գործերը).

- ***ԵԴ1/1413/01/23*** *- 23.11.2023 թ. - 04.12.2023 թ. - 21.12.2023 թ. - 10.01.2024 թ. - 20.02.2024 թ. - 18.03.2024 թ. - 18.04.2024 թ. - 09.05.2024 թ. - 20.05.2024 թ. - 29.05.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 11 օր, 17 օր, 20 օր, 41 օր, 27 օր, 31 օր, 21 օր, 11 օր, 9 օր:*
- ***ԵԴ1/1240/01/23*** *- 14. 11.2023 թ. - 30.11.2023 թ. - 07.12.2023 թ. - 08.12.2023 թ. - 04.06.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 16 օր, 7 օր, 1 օր, 179 օր:*
- ***ԳԴ/0021/01/23*** *- 07.11.2023 թ. - 26.01.2024 թ. - 06.05.2024 թ. - 14.05.2024 թ. - 11.06.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 80 օր, 101 օր, 8 օր, 28 օր:*
- ***ԱՎԴ/0169/01/23*** *- 26.02.2024 թ. - 04.03.2024 թ. - 26.03.2024 թ. - 05.04.2024 թ. - 09.08.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 7 օր, 22 օր, 10 օր, 126 օր:*
- ***ԵԴ1/1960/01/23*** *- 22.02.2024 թ. - 03.05.2024 թ. - 12.06.2024 թ. - 17.07.2024 թ. - 18.07.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 71 օր, 40 օր, 35 օր, 1 օր:*
- ***ԵԴ/0749/01/22*** *- 08.09.2022 թ. - 12.10.2022 թ. - 21.06.2024 թ. - 22.06.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 34 օր, 618 օր, 1 օր:*
- ***ԿԴ/0294/01/21*** *- 02.09.2022 թ. - 06.09.2022 թ. - 16.11.2022 թ. -*

17.11.2022 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 4 օր, 71 օր, 1 օր:

- ***ԵԴ/0643/01/23*** *- 30.01.2024 թ. - 18.03.2024 թ. - 03.05.2024 թ. - 17.05.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 48 օր, 46 օր, 14 օր:*
- ***ԵԴ/1188/01/22*** *- 16.08.2022 թ. - 03.11.2023 թ. - 23.11.2023 թ. - 21.05.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 444 օր, 20 օր, 180 օր:*
- ***ԱՐԴ/0115/01/21*** *- 21.11.2022 թ. - 21.12.2022 թ. - 26.01.2023 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 30 օր, 36 օր:*
- ***ԵԴ/1245/01/22*** *- 15.08.2023 թ. - 17.09.2023 թ. - 04.12.2023 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 33 օր, 78 օր:*
- ***ԱՐԱԴ/0139/01/22*** *- 23.05.2023 թ. - 10.10.2023 թ. - 22.01.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 140 օր, 104 օր:*
- ***ԵԴ1/0992/01/23*** *- 06.02.2024 թ. - 06.03.2024 թ. - 07.03.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 29 օր, 1 օր:*
- ***ԵԴ1/1568/01/23*** *- 06.02.2024 թ. - 18.03.2024 թ. - 27.06.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 41 օր, 101 օր:*
- ***ԵԴ/0367/01/18*** *- 13.03.2023 թ. - 07.11.2023 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 239 օր:*
- ***ԱՎԴ/0099/01/22*** *- 14.12.2022 թ. - 01.02.2023 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 49 օր:*
- ***ԵԴ1/0448/01/23*** *- 17.11.2023 թ. - 17.05.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 182 օր:*
- ***ԵԴ/1195/01/22*** *- 07.02.2024 թ. - 14.03.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 36 օր:*
- ***ԱՐԴ/0190/01/19*** *- 01.08.2022 թ. - 10.08.2022 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 9 օր:*
- ***ԱՐԴ/0170/01/21*** *- 15.01.2024 թ. - 24.05.2024 թ., որտեղ նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է 130 օր:*

Երեք և ավելի նիստեր մշտադիտարկած դատական գործերով առաջին և վերջին նիստերի միջև տևողությունն ունի հետևյալ պատկերը.

Դատական գործ	Տևողությունը (տարի, ամիս, օր)
• ԵԴ1/1240/01/23՝	6 ամիս 21 օր
• ԳԴ/0021/01/23՝	7 ամիս 4 օր
• ԱՎԴ/0169/01/23՝	5 ամիս 14 օր
• ԵԴ1/1960/01/23՝	4 ամիս 26 օր
• ԵԴ/0749/01/22՝	1 տարի 9 ամիս 14 օր
• ԿԴ/0294/01/21՝	2 ամիս 15 օր
• ԵԴ/0643/01/23՝	3 ամիս 17 օր
• ԵԴ/1188/01/22՝	1 տարի 9 ամիս 5 օր

Այսպիսով՝ դատական նիստերի միջև ընկած միջին ժամանակահատվածը միջինում 47 օր է, ինչը համեմատաբար բարձր ցուցանիշ է և մտահոգիչ հանգամանք, եթե հաշվի առնենք գենդերային բռնության գործերով տուժողների առանձնահատուկ կարիքները արագ արձագանքման, պաշտպանության և վնասի նվազեցման և այլ տեսանկյուններից: Իսկ որոշ գործերով դատական նիստերի՝ միջև մի քանի ամիս, անգամ մեկ տարուց ավելի ընդմիջումներով կայանալու հանգամանքը վկայում է դատական գործընթացների լուրջ ձգձգումների և, ընդհանրապես, դատարանների ծանրաբեռնվածության մասին: Այս երկարատև ժամանակահատվածները խաթարում են դատավարության նպատակային ընթացքը և բացասաբար անդրադառնում արդարադատության արդյունավետության վրա:

ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻՆ

87 նիստերից 63-ում տուժողը ներկա է եղել նիստին, 9-ում ներկա չի եղել, իսկ **մեղադրյալը 55-ում է ներկա եղել, 11-ում ներկա չի եղել** [մանրամասն տե՛ս Աղյուսակ 5]: Մնացած դեպքերում տուժողների և մեղադրյալների ներկայության վերաբերյալ տվյալներ չկան:

Դատարան/Նստավայր	Տուժողը ներկա է նիստին	Տուժողը ներկա չէ նիստին	Մեղադրյալը ներկա է նիստին	Մեղադրյալը ներկա չէ նիստին
Արարատի և Վայոց Ձորի	**6**	**3**	**8**	**1**
Արտաշատ	5		5	
Մասիս	1	3	3	1
Արագածոտն	**1**	**1**	**2**	
Աշտարակ	1	1	2	
Գեղարքունիք	**2**		**2**	
Գավառ/Մարտունի	1		1	
Սևան	1		1	
Կոտայք	2	1	3	
Աբովյան	2	1	3	
Արմավիր	**6**		**3**	
Էջմիածին	5		2	
Արմավիր	1		1	
Երևան	**46**	**4**	**37**	**10**
Կենտրոն	10	2	9	2
Աջափնյակ	16	1	16	1
Շենգավիթ	14		5	6
Ավան	6	1	7	1

Աղյուսակ 5

Տուժողի՝ նիստին չներկայանալու պատճառները հետևյալն են եղել.

- 5-ով՝ երկրում չի եղել,
- 2-ով՝ վատառողջ է եղել,
- 1-ով՝ մայրն է մահացել,
- 1-ով՝ երեխան հիվանդ է եղել:
- Մնացած դեպքերում՝ տուժողների՝ նիստին չներկայանալու պատճառների վերաբերյալ տվյալներ չկան:

Մեղադրյալի՝ նիստին չներկայանալու պատճառները հետևյալն են եղել.

- 5-ով՝ պայմանագրային զինծառայության մեջ է եղել,
- 1-ով՝ հոգեկան առողջության կենտրոնում է եղել,
- 1-ով՝ շփոթել է նիստի օրը,
- 1-ով՝ առանց պատճառի:
- Մնացած դեպքերում մեղադրյալների՝ նիստին չներկայանալու պատճառների վերաբերյալ տվյալներ չկան:

Դատական համակարգի ծանրաբեռնվածությունից բացի՝ առկա են նաև այլ հանգամանքներ, որոնք նպաստում են գործերի քննության ձգձգմանը: Այդ պատճառներից է դատավարության մասնակիցների բացակայությունը: Սակայն այստեղ պետք է առանձնացնել, որ տուժողների բացակայության հիմնական պատճառները պայմանավորված են եղել անձնական և ընտանեկան հանգամանքներով: Ի տարբերություն տուժողների՝ մեղադրյալների բացակայության պատճառները տարբեր են և որոշ դեպքերում հիմնավորված չեն, ինչը կարող է պահանջել ավելի խիստ վերահսկողություն կամ լրացուցիչ միջոցառումներ:

> **Նիստերի քարտուղարը միայն 5 դեպքում է տեղյակ եղել կողմի չներկայանալու պատճառից,** իսկ 2 **դեպքում հստակ է, որ տեղյակ չի եղել:** Ընդ որում՝ 2 դեպքում գրավոր և 2 դեպքում բանավոր (զանգով) ձևով է տեղեկացվել: Մնացած դեպքերում կողմի՝ նիստին չներկայանալու պատճառների վերաբերյալ նիստերի քարտուղարի տեղյակ լինելու մասին տվյալներ չկան:

Դատական նիստերին կողմերի չներկայանալու մասին քարտուղարի տեղեկացվածության այսպիսի ցածր մակարդակի մասին փաստը ցույց է տալիս, որ նիստերի կազմակերպման և կողմերի բացակայության պատճառների գրանցման գործընթացը դեռևս լիովին համակարգված չէ մեր երկրում: Սա նաև իրավական գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության պակասի մասին է ենթադրում, ինչը կարող է հանգեցնել նիստերի ոչ նպատակային հետաձգումների: Այս առումով անհրաժեշտ է վերանայել ծանուցման ձևերի արդիականացման մեխանիզմները (օրինակ՝ էլեկտրոնային ծանուցում, դրանց հաստատման համակարգ և այլն), ինչպես նաև կողմերի պարտավորությունների ապահովման միջոցները նիստերին ներկայանալու վերաբերյալ:

3 դեպքում է հայտնի եղել, որ նիստին մեղադրյալի չներկայանալու պատճառով բերման ենթարկելու որոշում չի կայացվել:

Տուժողը նիստին գնացել է հետևյալ անձանց հետ.

- 13 դեպքում՝ ընտանիքի անդամի,
- 9 դեպքում՝ մենակ,
- 6 դեպքում՝ ընկերոջ,
- 4 դեպքում՝ բարեկամի,
- 2 դեպքում՝ փաստաբանի/ներկայացուցչի:
- Մեղադրյալը նիստին գնացել է հետևյալ անձանց հետ.
- 11 դեպքում՝ ոստիկանի,
- 7 դեպքում՝ ընտանիքի անդամի,
- 7 դեպքում՝ մենակ,
- 4 դեպքում՝ բարեկամի,
- 2 դեպքում՝ փաստաբանի/ներկայացուցչի:

Ինչպես նկատելի է, տուժողները հաճախ միայնակ են ներկայացել նիստերին՝ առանց պաշտպանական կամ իրավաբանական ներկայացուցչության ուղեկցության: Սա կարող է բացասաբար ազդել ինչպես նրանց հոգեբանական վիճակի, այնպես էլ իրավական պաշտպանության որակի վրա: Միաժամանակ կարող ենք ենթադրել, որ տուժողների համար ընտանիքի կամ ընկերների աջակցության կարևորումը վկայում է դատական գործընթացներում հուզական աջակցության կարիքի մասին: Սակայն պետք է շեշտել, որ ոչ միայն տուժողների, այլև երկու կողմերի դեպքում էլ նկատվում է իրավական ներկայացուցիչների (փաստաբանների) հետ նիստերին ներկայանալու համեմատաբար ցածր ցուցանիշ: Սա կարող է մատնանշել նաև իրավական աջակցության մատչելիության կամ անհրաժեշտության ընկալման հետ կապված խնդիրները:

ՏՈՒԺՈՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

21 դեպքում տուժողը և մեղադրյալը հանդիպել են նախքան նիստի մեկնարկը, այդ թվում՝ 4-ում մայր (տուժող) և որդի (մեղադրյալ) միշտ իրար հետ են եկել, իսկ 9 դեպքում չեն հանդիպել: Հայտնի է, որ *2 դեպքում անձինք հանդիպել են մինչև 5 րոպե, 1-ում՝ մինչև 15 րոպե, իսկ 1-ում՝ մինչև 30 րոպե տևողությամբ:*

Կողմերի հանդիպելու պայմանները հետևյալն են եղել. 5 դեպքում կողմերը նիստերի դահլիճում նստած են եղել, ընդ որում՝ 1-ում իրար հետ չեն շփվել: 4 դեպքում դատարանի միջանցքում են հանդիպել, իսկ 1-ում նախքան դատարանի դահլիճ մտնելն են կարճատև հանդիպել:

Տուժող և մեղադրյալ կողմերի միջև նման ուղղակի շփումը՝ հատկապես ընտանեկան կամ գենդերային բռնության գործերում, հակասում է Ստամբուլի կոնվենցիայի և ՄԱԿ-ի՝ գենդերային հիմքով բռնության ենթարկվածների իրավունքների վերաբերյալ փաստաթղթերում ամրագրված սկզբունքներին, ըստ որոնց՝ տուժողի պաշտպանությունը պետք է երաշխավորվի դատական ամբողջ գործընթացում: Այս տեսակի շփումները վտանգում են տուժողի հոգեբանական կայունությունն ու ապահովությունը: Նույն տարածքում գտնվելու հանգամանքը (դահլիճ կամ միջանցք) կարող է լարվածություն առաջացնել և ավելի բարդացնել վիճակը:

Դատարանի շենքում՝ նիստերի դահլիճից դուրս, բռնարարի և բռնության ենթարկված կնոջ հանդիպումը բացառելու նպատակով փորձագետները խորհուրդ են տալիս դատարանի շենքերն այնպես նախագծել, որ վարույթի կողմերն առանձին սպասասրահներում գտնվելու հնարավորություն ունենան[44]:

13 դեպքում նիստի ընթացքում տեղի է ունեցել ընդմիջում, իսկ 17-ում չի եղել: Միայն 2 դեպքում է առկա եղել հայտարարություն կամ պատճառ ընդմիջման համար, որտեղ մի դեպքով իրեղեն ապացույցները պետք է բերեին: Իսկ մյուս դեպքով մեղադրողը դուրս է գնացել ամբաստանյալի հետ՝ բանակցելու համաձայնեցված վարույթի վերաբերյալ, իսկ տուժողը մնացել է դահլիճում, ապա դուրս է եկել իր փաստաբանի ուղեկցությամբ: Այդ 13-ից *4-ի դեպքում ընդմիջումը տևել է մինչև 5 րոպե, 3-ում՝ մինչև 15 րոպե, 2-ում՝ մինչև 30 րոպե, 1-ում՝ մինչև 1 ժամ, իսկ 3-ի վերաբերյալ տվյալներ չկան:* **5-ի դեպքում ընդմիջման ժամանակ կողմերը եղել են նույն տարածքում,** իսկ 2-ի դեպքում՝ չեն եղել:

[44] «Կանանց համար արդարադատության մատչելիություն», իրավաբանների համար ձեռնարկ. https://rm.coe.int/methodology-womens-access-to-justice-arm-pgg/16809c8282

2 դեպքում տեղի է ունեցել միջադեպ (հայտնի է, որ 1-ում չի եղել, իսկ մնացած նիստերի վերաբերյալ տվյալներ չկան), որտեղ առաջին միջադեպի ընթացքում տուժողն ու մեղադրյալը միշտ վիճաբանել են իրար հետ, իսկ երկրորդ դեպքում ամբաստանյալը իբրև թե իր պաշտպանի հետ է խոսել, սակայն ընդգծված բարձրաձայն, դարձյալ մեղադրական-վիրավորական արտահայտություններ է արել կնոջ հասցեին: Նման իրավիճակ է եղել նաև նիստի մեկնարկից առաջ, երբ կողմերը դահլիճում են եղել, իսկ դատավորն ուշացել է: Ամբաստանյալն անգամ սպառնացել է՝ ասելով, որ *«այնպես է անելու, որ իր տղան մորը չճանաչի»:* Կարգադրիչը դիտողություն է արել՝ ասելով, թե *«ավելորդ բաներ պետք չէ խոսել, ինչ ունի ասելու, կարող է նիստի ժամանակ ասել»:*

5-ի դեպքում կողմերը հանդիպել են դատարանի շենքում կամ շենքի մոտակայքում, այդ թվում՝ 4-ի դեպքում՝ ոստիկանների ուղեկցությամբ: Հայտնի է, որ 2-ի դեպքում չեն հանդիպել, ընդ որում՝ 1 նիստի ժամանակ, թեև կողմերի միջև շփում չի եղել, սակայն տուժողը վախեցել է, որ մեղադրյալն իրեն կհետապնդի: Իսկ 1 դեպքով տուժողը հայտարարել է, որ հանուն իր երեխաների բողոք չունի և ցանկանում է լքել դատարանը: Դատավորը պարզաբանել է, որ ընտանեկան բռնության գործերը քննվում են հանրային մեղադրանքի շրջանակում, և որ նրա՝ բողոքից հրաժարվելը չի կարող ազդել գործի քննության կարճման վրա: Այնուամենայնիվ, տուժողը հայտնել է, որ չի ցանկանում մասնակցել համաձայնեցված վարույթի բանակցություններին և լքել է նիստերի դահլիճը, արդյունքում չի հանդիպել մեղադրյալի հետ:

Ինչպես տեսնում ենք, ընդմիջումները հաճախ են եղել, սակայն դրանց պատճառները հաճախ չեն հայտարարվել, ինչը թափանցիկության և հաշվետվողականության խնդիր է: Ընդմիջումները որոշ դեպքերում տևել են զգալի ժամանակ, իսկ կողմերի՝ նույն տարածքում գտնվելը կարող է պարունակել լարվածության կամ անցանկալի շփումների ռիսկեր: Այդ հանգամանքը, որ տուժողն ու մեղադրյալը միասին են եղել ընդմիջման տարածքում, կարող է դիտվել որպես վտանգի բարձր ռիսկերով միջավայր, որը խախտում է բռնության ենթարկվածի անվտանգության և արժանապատվության իրավունքը: Ավելին՝ կողմերի անմիջական շփումը նիստից առաջ կամ ընդմիջումների ժամանակ, հատկապես առանց դատարանի աշխատակիցների վերահսկողության, կարող է հանգեցնել լարված իրավիճակների, սպառնալիքների և նույնիսկ վտանգավոր միջադեպերի, որը և արտացոլվում է արձանագրված դեպքով: Սա պահանջում է ավելի խիստ կազմակերպչական մոտեցում՝ կողմերի շփումները նվազեցնելու կամ վերահսկելու համար: Իսկ արդեն միջադեպերի առկայությունը բարձրացնում է դատական անվտանգության մեխանիզմների

անբավարարության հարցը: Ավելին՝ միջադեպերի արձանագրումը, հատկապես սպառնալիքների բնույթով, իրավական գնահատման կարիք ունի, օրինակ՝ արձանագրված դեպքով դատական դահլիճում հնչած սպառնալիքները կարող են գործող պաշտպանական միջոցների կիրառման հիմք դառնալ: Այստեղ նաև կարևոր է կարգադրիչների ակտիվ ներգրավվածությունը՝ կանխելու համար միջադեպերը և վերահսկելու կողմերի վարքը: Բացի այդ՝ հնարավոր միջոցներից է դատական նիստերից առաջ և ընդմիջումների ժամանակ կիրառել կողմերի տարանջատման կամ ֆիզիկական տարբերակիչ ուղիներ կամ ապահովել անվտանգության տեսախցիկներ, առանձին սպասասրահներ և տուժողի ուղեկցող ծառայություններ և այլն:

Մեկ դեպքում, թեև կողմերի միջև շփում չի եղել, սակայն տուժողը վախեցել է, որ մեղադրյալը կհետապնդի իրեն: Սա շատ լուրջ ազդակ է, որը մատնանշում է տուժողի անվտանգության իրական կամ ընկալվող սպառնալիքը: Սա վկայում է նաև, որ նույնիսկ ոչ ֆիզիկական շփումը կարող է առաջացնել լուրջ հոգեբանական անհանգստություն և վախ, ինչն ուղղակիորեն հակասում է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիայի) 56-րդ հոդվածով ամրագրված պաշտպանական պարտավորություններին[45]:

Հատկապես մտահոգիչ է այն դեպքը, երբ տուժողը հայտնել է, որ «բողոք չունի» և դուրս է եկել դատարանից՝ չցանկանալով մասնակցել համաձայնեցված վարույթին: Դատարանի պարզաբանումը, թե ընտանեկան բռնության գործը համարվում է հանրային մեղադրանք, իրավական տեսանկյունից ճիշտ է, սակայն տուժողի փաստացի հեռացումը դատական գործընթացից կարող է վնասել գործի ամբողջ ընթացքը:

Տուժողների համար դատարանի միջավայրը հաճախ լարված և վախեցնող է՝ հատկապես ընտանեկան բռնության գործերում: Անվտանգության ապահովումը (օրինակ՝ ոստիկանների ուղեկցություն) կարևոր է, սակայն անգամ ֆիզիկական բաժանումը միշտ չէ, որ բավարարում է տուժողի հոգեբանական անվտանգությունը[46]:

Կողմերը հեռացել են նիստից հետո հետևյալ հաջորդականությամբ.

- 7 դեպքում՝ սկզբում մեղադրյալը,
- 4 դեպքում՝ սկզբում տուժողը,
- 3 դեպքում՝ միասին,

[45]«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան. https://rm.coe.int/168046246d
[46]Trauma-Informed Courthouse Design: https://thecourtmanager.org/articles/trauma-informed-courthouse-design-33-1/

- 2 դեպքում՝ հեռանում են գրեթե միաժամանակ, սակայն չեն հանդիպում դատարանի միջանցքում կամ շենքից դուրս:
- Մնացած դեպքերում, թե ինչպես կամ ինչ հաջորդականությամբ են կողմերը նիստից հեռանում, տվյալներ չկան:

Կողմերի հեռանալու հաջորդականությունը կարևոր է հատկապես տուժողի անվտանգությունն ապահովելու և մեղադրյալի հետ անցանկալի շփումները կանխելու տեսանկյունից: Թեև որոշ դեպքերում կողմերի կարգավորված հեռացում է նկատվում (սկզբում՝ մեղադրյալը), սակայն կան նաև դեպքեր, երբ նրանք հեռանում են միասին կամ գրեթե միաժամանակ, ինչը կարող է ռիսկեր պարունակել: Որևէ մեխանիզմ, որն ապահովում է կողմերի հաջորդական կամ նիստերի դահլիճից առանձին դուրս գալը, ըստ երևույթին, չի գործել կամ չի եղել: Սա լուրջ խնդիր է անվտանգության և տուժողի երկրորդային վիկտիմիզացիան կամ կրկնազոհացումը կանխելու տեսանկյունից: Միջազգային պրակտիկան (օրինակ՝ ԱՄՆ, Միացյալ Թագավորություն և այլն) խորհուրդ է տալիս կիրառել հատուկ ուղիներ, մուտքեր/ելքեր կամ անգամ տարբեր ժամանակացույցեր՝ կողմերի հանդիպման հավանականությունը նվազեցնելու համար: Օրինակ՝ ԱՄՆ-ում առկա են տուժողների և մեղադրյալների համար առանձին սպասասրահներ, կամ կիրառվում են հաջորդական (հերթափոխով) ելքի և մուտքի ժամանակներ, որպեսզի հնարավորինս բացառվի նրանց հանդիպումը, և կանխվի տուժողին վախեցնելը կամ ճնշելը[47]: Առկա է նաև նաև այլ մեխանիզմ. մեղադրյալները մնում են դատարանում 15 րոպե ավել, որպեսզի տուժողն անվտանգ կարողանա լքել տարածքը[48]: Փորձագետների կարծիքով պատշաճ գործելակերպ է համարվում նաև կողմերին որոշակի ժամանակային ընդմիջումով դատարանից դուրս թողնելը՝ բռնության ենթարկվածին թույլ տալով առաջինը դուրս գալ դատարանից և անհրաժեշտության դեպքում անվտանգության աշխատակիցների ուղեկցություն առաջարկելով[49]: Հետևաբար կողմերի հեռացման հաջորդականության տարբերակված մոտեցումը կարող է նպաստել լարվածության նվազեցմանը:

20 դատական գործով տուժողն ունեցել է ներկայացուցիչ, 2-ում չի ունեցել, իսկ մնացած դեպքերում տվյալներ չկան, թե արդյոք տուժողն ունեցել է ներկայացուցիչ: **16 դեպքերում տուժողի ներկայացուցիչը եղել է հասարակական կազմակերպության փաստաբանը,** ընդ որում՝

[47]Integrating Procedural Justice in Domestic Violence Cases. A Practice Guide: https://www.innovatingjustice.org/wp-content/uploads/2017/07/Practice-Guide-PJinDV.pdf

[48]An extra safety measure for domestic violence victims: https://www.washingtonpost.com/opinions/an-extra-safety-measure-for-domestic-violence-victims/2015/05/19/58ad06b6-fe62-11e4-8b6c-0dcce21e223d_story.html

[49]«Կանանց համար արդարադատության մատչելիություն», իրավաբանների համար ձեռնարկ. https://rm.coe.int/methodology-womens-access-to-justice-arm-pgg/16809c8282

բոլոր դեպքերում վերջինս եղել է «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի փաստաբանը: 1 գործով տուժողի ներկայացուցիչ է եղել հանրային պաշտպանը, 1-ով՝ ծանոթ փաստաբանը, որն ընկերոջ ընկերն է եղել և անվճար հիմունքով է աջակցություն տրամադրել, 1-ով՝ վճարովի փաստաբանը, իսկ մնացած գործերով տվյալներ չկան տուժողի՝ ներկայացուցիչ ունենալու հանգամանքի մասին:

Ինչպես տեսնում ենք, շատ դատական գործերով տուժողն ունեցել է ներկայացուցիչ, որոնց մեծամասնությունը եղել է «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի փաստաբանը: Սա ընդգծում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների չափազանց կարևոր դերը տուժողներին անվճար և, ամենակարևորը, մասնագիտացված իրավական աջակցություն տրամադրելու գործում, հատկապես՝ կանանց նկատմամբ բռնության գործերում: Սակայն համակարգային մոտեցման բացակայությունը՝ հանրային պաշտպանի մասնակցության ցածր մակարդակով, վկայում է պետական իրավաբանական աջակցության անհամաչափ բաշխման մասին: Միաժամանակ, սա ընդգծում է պետության կողմից անվճար իրավական աջակցության համակարգի զարգացման կարևորության և ՀԿ-ների հետ համագործակցության խորացման կարիքի մասին: Ավելին՝ կարևորում է պետության պարտավորությունները՝ պատշաճ կերպով ապահովելու տուժողների՝ իրավաբանական աջակցությունից և իրավաբանական անվճար օգնությունից օգտվելու իրավունքի իրացումը, որը, մասնավորապես, երաշխավորված է Ստամբուլի կոնվենցիայի 57-րդ հոդվածով:

> 16 դեպքերում մեղադրյալի համար որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին, 4-ում՝ կալանքը, այդ թվում՝ 1-ով դատարանը փոխել է տնային կալանքի, իսկ մնացած դեպքերի վերաբերյալ տվյալներ չկան:

Խափանման միջոցների ընտրությունը հիմնականում նույնն է, սակայն մեծ մասամբ մեղադրյալները ազատության մեջ են, ինչը կարող է ավելացնել տուժողի վախերն ու ռիսկերը դատարանում և դրա սահմաններից դուրս: Այնուամենայնիվ, այս պարագայում Ստամբուլի կոնվենցիան պահանջում է զգայուն և անհատականացված մոտեցում՝ հաշվի առնելով կանանց նկատմամբ բռնության ռիսկը:

ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՏՈՒԺՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Նիստին ներկա անձանց կամ դատավարության մասնակիցների կողմից **տուժողի համար վիրավորական կամ խտրական որևէ արտահայտություն, հարց, մեկնաբանություն թույլ տալու և/կամ ճնշող միջավայր ստեղծելու առնչությամբ արձանագրվել է 6 դեպք,** որոնք ունեցել են հետևյալ բնույթը.

- *Մեղադրյալը միշտ կնոջը մեղադրել է դավաճանության համար, մյուսով՝ շեշտվել է կնոջ կապը այլ տղամարդկանց հետ, մեկ այլ դեպքով՝ մեղադրյալ ամուսինը նիստի ընթացքում մշտապես հայտնել է, թե նախկին կինը անբարոյական է, որ նա ունի սիրեկան, և դա է բռնության միակ պատճառը, թեև նրանք երկար ժամանակ միասին չեն բնակվել: Իսկ մյուսով էլ՝ ամբաստանյալը կնոջ հասցեին մեղադրական-վիրավորական արտահայտություններ է հնչեցրել նախքան նիստի մեկնարկը:*
- *Մեղադրյալի փաստաբանը այնպիսի հարցեր է տվել տուժողին, որից նա նյարդայնացել է, քանի որ նրան թվացել է, որ կասկածի տակ են դնում իր ներկայացրածը:*
- *Դատավորը մի արտահայտություն է արել, որն ասելուց առաջ նշել է՝ «հարյուր անգամ ինձ ճիշտ հասկացեք, ես ել եմ ուզում իրավիճակը հասկանամ»: Դատավորը հարց է տվել տուժողին՝ «արտաքինից նորմալ անձնավորություն եք երևում, հաց ուտելու ընթացքում ի՞նչ ծիծաղելի բան կա, որ ձեզ նկարել են»:*

6 դեպքում արձանագրվել են վիրավորական կամ խտրական արտահայտություններ, մեկնաբանություններ, ընդ որում՝ հիմնականում մեղադրյալի կողմից: Վերջիններս կանանց մեղադրել են դավաճանության համար, շեշտել այլ տղամարդկանց հետ կապերը, ինչն արտահայտում է բռնարարների հաճախակի կիրառվող մարտավարությունը՝ մեղադրել և խայտառակել տուժողին: Առավել մտահոգիչ է, երբ նման մեկնաբանություններ անում են դատավորները և փաստաբանները, որոնք պետք է պահպանեն էթիկայի կանոնները և զերծ մնան տուժողի արժանապատվությունը նսեմացնող հարցեր ուղղելուց: Նման արտահայտությունները և հարցերը կարող են ստեղծել տուժողի համար ճնշող, խտրական և ոչ անվտանգ միջավայր, խաթարել նրա վստահությունը դատական համակարգի նկատմամբ և առաջացնել երկրորդային վիկտիմիզացիա: Այսպիսի մոտեցումները հակասում են «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման» ՄԱԿ-ի կոնվենցիայի (CEDAW) թիվ 33 Ընդհանուր հանձնարարականով

ամրագրված պահանջները՝ ապահովելու գենդերազգայուն դատավարություն: Դատական նիստերի ընթացքում մասնակիցների վարքագիծը պետք է լինի առավել զգույշ, իսկ դատարանը՝ ավելի ակտիվ վերահսկող և միջամտող՝ կանխելու նման իրավիճակները:

Դատավարության միջավայրում խտրական կամ վիրավորական արտահայտությունները կարող են լուրջ բացասական ազդեցություն ունենալ տուժողի համար՝ ինչպես հոգեբանական, այնպես էլ դատավարական գործընթացի արդյունավետության տեսանկյունից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասը հստակ սահմանում է, որ վարույթի ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ֆիզիկական կամ հոգեկան բռնության և այլն[50]: Դատարաններն ու դատավարության բոլոր մասնակիցները պարտավոր են պահպանել տուժողի արժանապատվությունը և ապահովել անվտանգ, հարգալից միջավայր արդարադատության լիարժեք իրականացման համար:

8 դեպքում տուժողին հնարավորություն է տրվել ներկայացնելու բռնությունների ամբողջական շղթան, ընդ որում՝ 1 դեպքում արձանագրվել է, որ դատավորը համբերատար լսել է ամբողջ պատմությունը, իսկ 1 դեպքում դատավորը թույլ չի տվել մեղադրյալին ընդհատել տուժողին: Վերջին դեպքում տուժողը ամբաստանյալի ներկայությունից վախից կուչ է եկել պատի տակ, բռնել է փաստաբանի ձեռքը, հայացքը պատին ուղղել, լաց եղել: Ավելին՝ ընդմիջմանը ևս նա վախից լաց է եղել: Սակայն **6 դեպքում տուժողը այդ հնարավորությունը չի ունեցել,** այդ թվում՝ 1 դեպքում, երբ դատախազը շտապել է: Թեև դատավորն ու դատախազը բավականին ուշադիր են եղել տուժողի և մեղադրյալի նկատմամբ՝ թույլ չտալով, որ մեղադրյալը ճնշի տուժողին, նաև թույլ տալով, որ կինը տեղից, նստած ցուցմունք տա: Մնացած դեպքերում առկա չեն տվյալներ, որ տուժողը ներկայացրել է բռնության ամբողջական շղթան:

Տուժողին իր բռնության պատմությունը լիարժեք ներկայացնելու հնարավորություն տալը կարևոր է արդարադատության ապահովման համար: Այս հանգամանքը հատկապես կարևորվում է կանանց նկատմամբ բռնության գործերում, որտեղ հանցագործության օբյեկտիվ քրեաիրավական որակումը հաճախ կախված է բռնության շարունակականության և դրա դրսևորումների բազմազանության մասին ամբողջական տեղեկատվությունից: Սակայն հայտնի է, որ միայն 8 դեպքում է տուժողին հնարավորություն տրվել ներկայացնելու բռնության ամբողջական շղթան, որը խիստ մտահոգիչ ցուցանիշ է:

[50]https://www.arlis.am/hy/acts/154763

Միաժամանակ, անգամ 1 դեպքում տուժողի նկատմամբ ցուցաբերված հոգեբանական ճնշումը եղել է այնքան բարձր, որ նա ֆիզիկապես կուչ է եկել, լաց եղել, բռնել փաստաբանի ձեռքը: Իսկ սա վկայում է բարենպաստ դատական միջավայրի ոչ պատշաճ ապահովման և տուժողի անվտանգության ու հարմարավետության խախտման մասին՝ հակասելով թե՛ CEDAW-ի և թե՛ Ստամբուլի կոնվենցիայի պահանջներին (հոդված 56):

Տուժողի ծանր հոգեբանական վիճակը և վախը մեղադրյալի ներկայությունից ընդգծում են հատուկ պաշտպանական միջոցառումների անհրաժեշտությունը, ինչպիսիք են դատարանում հատուկ պայմանները, հոգեբանական աջակցությունը և առանձնացված ցուցմունք տալու հնարավորությունը: Իսկ դատավորների և դատախազների զգայունությունը կարևոր է, սակայն այն միշտ չէ, որ բավարար է տուժողի անվտանգությունն ապահովելու համար:

Մյուս կողմից՝ 6 դեպքերում տուժողը հնարավորություն չի ունեցել պատմելու իր նկատմամբ դրսևորված բռնության ամբողջական շղթան, ինչն արդարադատությունից օգտվելու թույլտվության և արդար վերաբերմունքի տեսանկյունից խախտում է համարվում: Մասնավորապես, ՄԱԿ-ի Հանցագործությունների և իշխանության չարաշահման ենթարկվածների հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների համաձայն, պետք է աջակցել բռնության ենթարկվածներին, որպեսզի դատական և վարչական ընթացակարգերը մեծ մասամբ արձագանքեն նրանց կարիքներին: Օրինակ՝ դատաքննության համապատասխան փուլերում պետք է ապահովել նրանց կարծիքի և ցանկությունների ներկայացումը և քննարկումը, դատաքննության ամբողջ ընթացքում պատշաճ օգնություն տրամադրել, նրանց համար անհարմարությունները նվազագույնի հասցնել, անհրաժեշտության դեպքում նրանց անձնական կյանքի հսկողությունը, նրանց և նրանց ընտանիքի, նրանց կողմի վկաների անվտանգությունը ապահովելու միջոցներ ձեռնարկել և այլն[51]:

9 դեպքում մեղադրյալը ներկայացրել է տուժողի անձնական կյանքի վերաբերյալ այնպիսի փաստեր, որոնք չեն առնչվել գործին: Դրանք ունեն հետևյալ բնույթը.

- *1 դեպքում մեղադրյալը փորձել է անդրադառնալ կնոջ անձնական կյանքին, սակայն դատավորը նրան նկատողություն է արել և զրկել հարցեր տալու իրավունքից՝ նշելով, որ նա իրավունքի չարաշահում է թույլ տալիս:*

[51]https://www.arlis.am/hy/acts/1897

- *1 դեպքում, երբ տուժողին հարցեր տալու հերթը հասել է ամբաստանյալին, վերջինս հարցրել է կնոջը, թե արդյոք նա ընկեր ունի: Դատավորը թույլ չի տվել այդ հարցին պատասխանել, քանի որ դա մեղադրանքի հետ կապ չի ունեցել: Ամբաստանյալը նաև շարունակաբար հարցրել է, թե արդյոք կինը խաբել է իրեն՝ նշելով. «Բա դու խաբելու հետևանքը չգիտե՞ս»: Այդ հարցը ևս հանվել է դատավորի կողմից: Դատավորը նաև հանել է ամբաստանյալի այն հարցը, որը վերաբերել է տուժողի «հանգստացնող դեղեր» ընդունելուն: Ամբաստանյալը փորձել է պարզել, թե կոնկրետ ինչ հաբեր է խմել կինը: Դատավորը հայտարարել է, որ դա բժշկական գաղտնիք է: Դատավորը պարբերաբար զսպել է ամբաստանյալին, որը տուժողի ցուցմունքի ժամանակ մեկնաբանություններ է արել՝ կոչ անելով ամբաստանյալին ավելի լուրջ մոտենալ գործի քննությանը:*
- *1 դեպքում մեղադրյալը փորձել է ասել, թե կինը կույս չի եղել, երբ ամուսնացել են: Տուժողի ներկայացուցիչը առարկել է, իսկ դատավորը ընդհատել է նրան՝ հայտնելով, որ հարցաքննության փուլում կկարողանա ներկայացնել գործին վերաբերող փաստերը, այլ ոչ անցյալի վերաբերյալ տեղեկություններ:*
- *1 դեպքում ընդմիջման ժամանակ տուժողը դատախազին հայտնել է, որ տղամարդը շարունակում է իրեն անհանգստացնել, իսկ մեղադրյալը ի պատասխան բղավել է՝ «ալիմենտով էրեխա ես պահում», և հնչեցրել այլ արտահայտություններ, որոնք լավ լսելի չեն եղել դահլիճի ապակեպատ լինելու պատճառով:*
- *1 դեպքում մեղադրյալը նշել է, որ կինը չի լսում քույրերին և ծնողներին:*
- *1 դեպքում երկու կողմերն էլ իրար են մեղադրել վատ ծնող լինելու համար:*
- *1 դեպքում մեղադրյալը ցույց է տվել համատեղ գրագրություն, ընտանեկան նկարներ:*
- *2 դեպքում մեղադրյալը ներկայացրել է այլ տղամարդկանց հետ կնոջ կապի վերաբերյալ:*

Այսպիսով՝ դատավարության ընթացքում արձանագրվել են տուժողի հասցեին հնչող անձնական կյանքին առնչվող, վիրավորական, ծաղրական և խտրական մեղադրանքներ: Իհարկե, դատավորները մի քանի դեպքերում արդյունավետ միջամտել են՝ նկատողություն անելով մեղադրյալին, զրկելով հարցեր տալու իրավունքից, հանելով անտեղի հարցերը, թույլ չտալով մեկնաբանություններ անել և կոչ անելով լուրջ մոտենալ գործի քննությանը: Ինչը ցույց է տալիս դատավորների կարողությունն ու պատրաստակամությունը՝ պահպանելու կարգը և պաշտպանելու տուժողին: Սակայն այս օրինաչափությունը

համատարած չէ և ընդգծում է դատավորների համար հատուկ վերապատրաստման անհրաժեշտությունը՝ նման իրավիճակներում անհապաղ և վճռական միջամտելու համար: Սրա մասին է նաև շեշտվում «Կանանց համար արդարադատության մատչելիություն» ձեռնարկում: Մասնավորապես, ընտանեկան բռնության գործերով կա հավանականություն, որ մեղադրյալը «կօգտագործի զոհին ահաբեկելու կամ դատական գործընթացում մանևրելու տակտիկաներ (օրինակ՝ կատաղի, ակնդետ հայացք նետելը, հուզական ելույթով հանդես գալը և այլն): Դատավորները պետք է վճռական գործողությունների դիմեն նախազգուշացում տալու, դատարանում վարույթի կողմերի նստելու տեղերը փոխելու կամ անհրաժեշտության դեպքում կատարողին դատական նիստերի դահլիճից հեռացնելու միջոցով»[52]:

> Ուշագրավ է նաև նշել, որ ԵԴ/1188/01/22 գործով տուժողը պատմել է, որ քննիչներից մեկը, իմանալով, որ կինը դիմել է «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ, հայտնել է, թե «այդ ՀԿ-ներն են մեղավոր, ՀԿ-ների հայտնվելուց հետո են հայ ընտանիքները քանդվում»:

Չափազանց մտահոգիչ և վտանգավոր է հասարակական կազմակերպությունների մասին իրավապահ մարմնի ներկայացուցչի կողմից նման դիրքորոշում կամ տեսակետ հայտնելը: Այն ոչ միայն ցույց է տալիս ՀԿ-ների դերի վերաբերյալ տեղեկատվության պակասն ու թյուրըմբռնումը և, ինչու չէ, կարծրատիպային մոտեցումը, այլև կարող է ուղղակիորեն խոչընդոտել տուժողներին իրենց իրավունքները պաշտպանելու և աջակցություն փնտրելու գործում: Նման մտածելակերպը խաթարում է բռնության ենթարկվածների պաշտպանության համակարգի ամբողջականությունը և կարող է նպաստել անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը: Սա ոչ միայն խտրական մեկնաբանություն է, այլ նաև հարցականի տակ է դնում պետության պարտավորությունը՝ ապահովելու քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը բռնության դեպքերի ընթացքում, որն ամրագրված է CEDAW-ի թիվ 33 Ընդհանուր հանձնարարականում (Պարբերություն 51(g)): Այս դեպքը ընդգծում է նաև իրավապահ մարմինների աշխատակիցների համար գենդերային հավասարության, ընտանեկան բռնության և ՀԿ-ների դերի վերաբերյալ պարտադիր վերապատրաստման անհրաժեշտությունը:

[52]«Կանանց համար արդարադատության մատչելիություն», իրավաբանների համար ձեռնարկ. https://rm.coe.int/methodology-womens-access-to-justice-arm-pgg/16809c8282

ԿԱՅԱՑԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

13 դատական գործով կայացվել է 15 դատավճիռ, այդ թվում՝ 13 գործով՝ մեղադրական, 1 գործով՝ արդարացման, իսկ 1 գործով քրեական գործի վարույթը կարճվել է՝ քրեական հետապնդման վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Դրանցից 6-ի դեպքում նշանակվել է ազատազրկում, որից 3-ում ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 3-ի դեպքում՝ տուգանք, 2-ի դեպքում՝ ազատազրկում և տուգանք: 2 դեպքերից մեկով Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել դատավճիռը, իսկ մյուսով փոփոխել է՝ նվազեցնելով ազատազրկման ժամկետը:

Գործերով կայացված դատավճիռների մանրամասն նկարագրությունը ներկայացված է ներքոգրյալում.

- **Արդարացման դատավճիռ կայացված 1 գործով** (ՀՀ ՔՕ 137.1-րդ հոդվածի 3-րդ մասով) քրեական հետապնդումը դադարեցվել, և քրեական գործով վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու պատճառաբանությամբ: Ընտրված «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացվել է: Ընդ որում՝ սույն գործով մեղադրանք էր առաջադրվել այն հիմքով, որ մեղադրյալը տանը անձի հասցեին հայհոյանքներ հնչեցնելու միջոցով ծանր վիրավորանք է հասցրել:
- **1 գործով** (ՀՀ ՔՕ 176-րդ հոդվածի 1-ին մասով, որը համապատասխանում է 2022 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՔՕ 253-րդ հոդվածի 1-ին մասով) նշանակվել է **600,000 ՀՀ դրամ տուգանք**: Պետք է նշել, որ տուժողը մշտապես պնդել է, որ իր համոզմամբ *«թե՛ դատավորը, թե՛ դատախազը կաշառված են եղել, ինչի պատճառով էլ ձգձգել են դատաքննությունը, որպեսզի մեղադրանքներից մի քանիսը հանվի մեղադրյալի վրայից»:*
- **1 գործով** (ՀՀ ՔՕ 194-րդ հոդվածի 1-ին մասով, 194-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերով, 335-րդ հոդվածի 1-ին մասով) վերջնական պատիժ է նշանակվել 2 **ամիս ազատազրկում և 100,000 դրամ տուգանք:** Մասնակի բավարարվել է նաև գույքային հայցը, և վճռվել է հօգուտ տուժողի բռնագանձել 48,000 դրամ:
- **1 գործով** (ՀՀ ՔՕ 195-րդ հոդվածի 1-ին մասով, 195-րդ հոդվածի 1-ին մասով) վերջնական պատիժ է նշանակվել **տուգանք 100,000 ՀՀ դրամի չափով:** Ընտրված խափանման միջոցը՝ բացակայելու արգելքը, թողնվել է անփոփոխ:

- **1 գործով** (ՀՀ ՔՕ 508-րդ հոդվածի 1-ին մասով) նշանակվել է **տուգանք 340,000 ՀՀ դրամի չափով,** որը թույլատրվել է մաս առ մաս վճարել 1 տարվա ընթացքում: Կիրառված խափանման միջոց՝ բացակայելու արգելքը, թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
- **1 գործով** (ՀՀ ՔՕ 112-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 (երկու) դրվագով, 113-րդ հոդվածի 1-ին մասով) նշանակվել է վերջնական պատիժ՝ **ազատազրկում 7 տարի ժամկետով:** Պատժի ժամկետին հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը՝ թողնելով **ազատազրկումը 6 տարի 4 ամիս 11 օր ժամկետով:** Խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: **2 տուժողների քաղաքացիական հայցերը բավարարվել են՝ բռնագանձելով 297.000 ՀՀ դրամ և 364.000 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում:** Սակայն Վերաքննիչ դատարանը դատավճիռը բեկանել ու փոփոխել է, և ազատազրկման ձևով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով պատիժ է նշանակել **ազատազրկում 6 տարի ժամկետով:**
- **1 գործով** (ՀՀ ՔՕ 171-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 194-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով) վերջնական պատիժ է նշանակվել **ազատության սահմանափակում 1 տարի ժամկետով:**
- **1 գործով (ՀՀ ՔՕ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով) նշանակվել է ազատազրկում 1 ամիս ժամկետով, սակայն այն պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 1 տարի ժամկետով: Բացի այդ՝ մեղադրյալի վրա դրվել են հետևյալ պարտականությունները.**

- բնակության վայրը փոխելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին սեղմ ժամկետում հայտնել իր նոր բնակության վայրի հասցեն,

- արգելել շփում ունենալ տուժողի հետ,

- արգելել այցելել տուժողի բնակության և աշխատանքի վայրեր:

Այս գործով ընտրված խափանման միջոցը՝ բացակայելու արգելքը, թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Իսկ **Վերաքննիչ դատարանը առաջին ատյանի դատավճիռը թողել է անփոփոխ:**

Ուշագրավ է նաև, որ մեղադրյալի ներկայացուցիչն իր խոսքում նշել է. *«Եթե Հայաստանում լինեին ապաստարաններ, իմ պաշտպանյալը կօգտվեր այդ հնարավորությունից, քանի որ բռնության զոհ է, և չեք գտնի մի հայ տղամարդ աշխարհում, ով էմոցիոնալ չի արձագանքի, երբ իմանա,*

որ իր ա նախկին կինը նամակագրություն ունի այլ տղամարդու հետ»:

Դատավորի վերաբերմունքից նկատելի է եղել, որ նա կարող էր համարել, թե տուժողին ծեծելու շարժառիթը եղել է սիրեկան ունենալու հանգամանքը: Տուժողի դատապաշտպանը միջնորդել է ոստիկանությունից վերցնել նախկինում տրված հայտարարությունները, սակայն դատավորը մերժել է միջնորդությունը՝ մեկնաբանելով, որ այդ տեղեկությունը չի կարող ազդել գործի լուծման վրա, և հասկանում է, որ դատապաշտպանը դրանով ցանկանում է շեշտադրել ընտանեկան բռնության հանգամանքը:

- **1 գործով** մեղադրյալն ընդունել է մեղքը և միջնորդել արագացված վարույթ կիրառել: Կողմերը առարկություն չեն ունեցել, և դատավորը բավարարել է միջնորդությունը: Մեղադրող դատախազը միջնորդել է 2 ամիս ազատազրկում նշանակել, առաջադրված մեղադրանքի 4 դրվագներից յուրաքանչյուրի համար՝ 15 օր: Իսկ տուժողը միջնորդել է ազատության սահմանափակում նշանակել, որպեսզի նախկին ամուսինը մնա ազատության մեջ, սակայն իրավունք չունենա իրեն մոտենալու: Բռնարարը զինվորական է եղել, որը դատարանին է ներկայացրել հրամանատարական կազմի կողմից տրված դրական բնութագրեր: Դա, ինչպես նաև տղամարդու խնամքին երեք անձանց առկայությունը դիտվել են որպես մեղմացուցիչ հանգամանք: **Դատարանը վճռել է 2 տարի ազատազրկման սահմանափակում նշանակել, սակայն պատիժը պայմանականորեն չի կիրառվել:**
- **1 գործով** (ՀՀ ՔՕ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 508-րդ հոդվածի 1-ին մասով) վերջնական պատիժ է նշանակվել՝ **ազատության սահմանափակում 1 տարի 8 ամիս ժամկետով՝** արգելելով առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության փոխել բնակության վայրը և օրական 8 ժամ բացակայել տնից:
- **1 գործով** (ՀՀ ՔՕ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով) նշանակվել է **ազատազրկում 1 ամիս ժամկետով, որը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 1 տարի ժամկետով:** «Բացակայելու արգելք» խափանման միջոցը մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը թողնվել է անփոփոխ:
- **1 գործով** համաձայնեցման վարույթ է կիրառվել (ՀՀ ՔՕ 113-րդ հոդվածի 1-ին մասով), և նշանակվել է **ազատազրկում 1 տարի ժամկետով և 200,000 դրամ տուգանք:**

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, հաշվի առնելով մշտադիտարկված գործերով արձանագրված խնդիրները և հիմք ընդունելով միջազգային իրավական փաստաթղթերով (CEDAW, Ստամբուլյան կոնվենցիա, ՔՔԻՄԴ, ՄԻԵԿ, ՄԻԵԴ նախադեպային իրավունք, ՄԱԿ-ի սկզբունքներ և այլն) և ստանդարտներով ամրագրված ՀՀ պարտավորությունները, կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի արդարադատական համակարգը՝ հատկապես ԳԲ և ԸԲ գործերով, առերեսվում է մի շարք համակարգային խոչընդոտների, ինչպիսիք են՝ դատարանների ծանրաբեռնվածություն, անարդյունավետ դատաքննություններ և անհարկի ձգձգումներ, տուժողների անվտանգության անբավարար ապահովում, կարծրատիպային վերաբերմունք, իրավաբանական աջակցության ոչ պատշաճ ապահովում կամ բացակայություն և այլն:

Մշադիտարկման տվյալները ցույց են տալիս, որ դատական նիստերի կեսը չեն կայացել կամ սկսվել են ուշացումով: Դա պայմանավորված է եղել ինչպես բուն կողմերի՝ մեղադրյալի և տուժողի, այնպես էլ դատավարության մյուս մասնակիցների՝ դատավորների, դատախազների, պաշտպանի և այլ անձանց չներկայացմամբ կամ ծանրաբեռնվածությամբ: Փաստորեն, ՀՀ դատական համակարգը պատշաճ չի ապահովում արագ, արդյունավետ և հասանելի արդարադատություն կանանց համար՝ հակասելով միջազգային ստանդարտներին, այն է՝ Ստամբուլի կոնվենցիայի հստակ պահանջներին՝ ապահովելու, որ գործի քննությունն իրականացվի առանց անհարկի ձգձգումների, ինչպես նաև ՄԱԿ-ի՝ հանցագործություններից տուժածների արդարադատությանը վերաբերող հիմնական սկզբունքներին՝ ապահովելու նրանց արդար և ժամանակին դատաքննության իրավունքները:

Դատարանների ֆիզիկական միջավայրը և նիստերի կազմակերպումը հիմնականում չեն բավարարել զոհակենտրոն և ապահով դատավարության միջազգային պահանջները: Անվտանգության տեսանկյունից նիստերը տեղի են ունեցել մի շարք թերություններով: Շատ դեպքերում արձանագրվել է, որ տուժողն ու մեղադրյալը հանդիպել են դատարանի ներսում կամ դահլիճում, սպասել են նույն տարածքում՝ տուժողի մոտ առաջացնելով վախ, սթրես կամ միջադեպ: Նկատվել են դեպքեր, երբ ամբաստանյալը վիրավորական արտահայտություններ է արել, սպառնալիքներ հնչեցրել կամ փորձել հոգեբանորեն ճնշել տուժողին: Ստամբուլի կոնվենցիան, ինչպես նաև ՄԱԿ-ի կարևորագույն ծառայությունների փաթեթը՝ բռնության ենթարկված կանանց

համար, պարտադրում են ապահովել տուժողների անվտանգությունը՝ ներառյալ առանձին սրահներ, մուտքեր, հեռակա ցուցմունք և այլ պաշտպանական մեխանիզմներ:

Ավելին՝ շատ դեպքերում տուժողների նկատմամբ դրսևորվել է անհարգալից վերաբերմունքի և կրկնազոհացնող մթնոլորտ: Դատական նիստերի ընթացքում արձանագրվել են մի շարք վիրավորական հարցադրումներ, կարծրատիպային մեկնաբանություններ մեղադրյալի, երբեմն էլ դատավորի կամ փաստաբանի կողմից: Տրված հարցերը, հնչեցված խտրական արտահայտությունները վերարտադրել են հասարակության մեջ գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերը: Մասնավորապես, դրանցում առկա են եղել տուժողին մեղադրելու՝ կնոջ անհավատարմության կամ անբարոյական կին հանգամանքը: Տուժողների մի մասը նիստերի ժամանակ զգացել է հոգեբանական ճնշում և վախ: Բացի այդ՝ որոշ տուժողներ չեն կարողացել ներկայացնել բռնության ամբողջական պատմությունը: Այնինչ CEDAW-ի թիվ 33 և 35 Հանձնարարականները պահանջում են, որ դատական համակարգը գործի գենդերազգայուն ձևով, զերծ լինի կարծրատիպերից, չառաջացնի կրկնազոհացում: Իսկ Ստամբուլի կոնվենցիայի համաձայն՝ արգելվում է հարցեր տալ տուժողի սեռական կյանքի մասին, եթե դրանք չեն առնչվում գործին: Դատական պրակտիկայում առկա են եղել խախտումներ տուժողի արժանապատվության, պաշտպանվածության և արդարության սկզբունքների նկատմամբ:

Որոշ տուժողները չեն ունեցել կամ չեն կարողացել լիարժեք օգտվել իրավաբանական ներկայացուցչությունից՝ խախտելով վերջիններիս արդար դատաքննության իրավունքը: Տվյալներից երևում է, որ միայն 20 գործով է տուժողը ունեցել փաստաբան, այն էլ հիմնականում՝ ՀԿ-ի միջոցով: Սա խոսում է իրավաբանական աջակցության անհամաչափ հասանելիության մասին: CEDAW-ն և Ստամբուլի կոնվենցիան պահանջում են՝ պետությունները պետք է ապահովեն, որ տուժողները ստանան իրավաբանական աջակցություն, այդ թվում՝ անվճար հիմունքներով, ինչպես նաև ունենան ներկայացուցիչ ամբողջ դատավարության ընթացքում:

Բազմաթիվ դատական նիստերի միջև միջակայքերը եղել են ամիսներ, որոշ դեպքերում՝ անգամ տարի, ինչն անհամաչափ երկար է՝ հատկապես ԳԲ և ԸԲ գործերի համար: Սակայն միջազգային ստանդարտների համապատասխան (ՔՔԻՄԴ-ի 14-րդ հոդված, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդված, Ստամբուլի կոնվենցիայի 49-րդ հոդված և այլն)՝ պահանջվում է խելամիտ ժամկետում, անաչառ և արդար դատաքննություն իրականացնել:

Հետևաբար այս խնդիրները հակասում են ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններին և խոչընդոտում են բռնության ենթարկվածների իրավունքների լիարժեք իրացումը:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ԸԲ գործերով կանանց համար մատչելի, զոհակենտրոն, արդյունավետ և խտրականությունից զերծ արդարադատությունն ապահովելը պետության պարտավորությունն է: Սույն առաջարկներն ուղղված են ԸԲ գործերով արդարադատության համակարգի բարելավմանը՝ մարդու իրավունքներին համահունչ մոտեցման ապահովմամբ, որոնք հիմնված են միջազգային փաստաթղթերի ու ստանդարտների վրա (CEDAW, Ստամբուլի կոնվենցիա, ՄԱԿ և ԵՄ սկզբունքներ, հանձնարարականներ, ուղեցույցներ և այլն): Առաջարկվող բարեփոխումները հնարավորություն կտան բարելավելու դատարանների գործելաոճը՝ ապահովելով հստակ ժամկետներ, թափանցիկություն, դատաքննության պատշաճ իրականացում, տուժողների պաշտպանություն, մասնագիտական պատրաստվածություն և դատական համակարգի հաշվետվողականություն: Այսպիսով՝ անհրաժեշտ է՝

- **Ստեղծել ԸԲ գործերով մասնագիտացված դատարաններ կամ բաժիններ:**
- **Բարելավել դատավարական ընթացակարգերը՝ սահմանելով դատաքննության ողջամիտ, սեղմ ժամկետներ, ապահովելով դատական նիստերի արդյունավետ և ժամանակին կազմակերպումը, ինչպես նաև ժամանակին իրազեկումը դատավարական կողմի չներկայանալու դեպքում:**
- **Ապահովել անվտանգ և զոհակենտրոն միջավայր տուժողների համար, մասնավորապես՝ տարանջատելով դատավարական կողմերին դատարան մուտք գործելիս, նիստերին մասնակցելիս, ընդմիջումների ընթացքում և դատարանից դուրս գալիս, այդ թվում՝ ապահովելով տուժողի և մեղադրյալի միևնույն տարածքում չգտնվելը, սկզբում տուժողի կողմից դատարանը լքելու հաջորդականությունը պահպանելը, առանձին սպասասրահներ ունենալը և այլն, ինչպես նաև՝**
- **Երաշխավորել տուժողների անվճար իրավաբանական օգնության և հոգեբանական աջակցության ապահովումը,**

- **Ապահովել տուժողների և վկաների կողմից բռնության ամբողջական պատմության լիարժեք և անխոչընդոտ ներկայացումը:**
- **Ապահովել հեռավար վկայության մեխանիզմների պատշաճ իրագործումը:**
- **Ապահովել դատական էթիկայի բարձր ստանդարտների պատշաճ պահպանումը և իրականացնել մշտական վերահսկողություն:**
- **Իրականացնել շարունակական մասնագիտացված վերապատրաստումներ դատավորների, դատախազների, դատական աշխատակիցների և փաստաբանների համար գենդերային հիմքով խտրականության, ԸԲ դեպքերի առանձնահատկությունների և գենդերային հավասարության վերաբերյալ:**
- **Իրականացնել ԸԲ գործերով դատական գործընթացների պարբերական մշտադիտարկում, զարգացնել պետական հաշվետվողականության մեխանիզմներն ու ապահովել տվյալների թափանցիկությունը:**
- **Ամրապնդել պետության և ՀԿ-ների համագործակցությունը կանանց արդարադատության մատչելիության ապահովման և ԸԲ կանխարգելման հարցերում:**

ISBN 978-9939-9361-4-7

9 789939 936147

«**Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա**» հասարակական կազմակերպություն
«**Իրավունքի ուժ**» հասարակական կազմակերպություն

Երևան, 2025